№ 2 (210) XX ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՄԻ ՄԵԾ ՇԱՐԺՄԱՆ ՍՏԻԵՐՆԵՐԸ

(ՌՈՒՍ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՎԻԺՄԱՆ ԱՌԻԹՈՎ)

I

Թւում է, թէ քաղաքական էւօլիւցիան այդ վիթխարի պեռուԹեան մէջ մի խոշոր զարտուղուԹեամբ շեղուել է համաշխարհային էւօլիւցիայի ճանապարհից և սահել է այլ աւազանով։

Պատճառները... պէտք է, անշուշտ, որոնել ժամանակի ընդհանուր ոգու, երկրի քաղաքական ու կուլտուրական պայմանների, այլ և — գուցէ գլխաւորապէս—ռուս ժողովրդի ու ղեկավարող մտաւորականուԹեան խառնուածքի ու բովանդակ հոգեբանուԹեան մէջ։

Գուցէ ոչ մի տեղ այդ մտաւորականուԹիւնը—խորհող, մարտնչող ու զոհաբերող ինտելիգենցիան—չի խաղացել այնքան գերակշռող ու կենտրոնական դեր ազատագրական յորձանքների մէջ, ինչպէս Ռուսաստանում։

Ինտելիգենցիան շարժման ուժն էր և միանգամայն ԹուլուԹիւնը։

Իր գեղեցիկ իդէալիզմով, անհատական հերոսուԹեան իր անսովոր Թռիչքներով նա նոր ու փայլուն էջ ընծայեց համաշխարհային պատմուԹեանը, հիացմունքի բուռն ցոյցեր յարուցանելով ամբողջ քաղաքակիրթ ու դեմոկրատ մարդկուԹեան մէջ։

Այդտեղ—նրա ուժը։

Սակայն... վարիչ ու պատասխանատու գործօնի պարտաւորուԹիւնները չեն սպառւում այդ անհատական ալտրուիզմի ու անձնուրացուԹեան Թափերով—Թէկուզ և յաճախ խօլական, անօրինակ ու ապշեցուցիչ... Անսահման ու ջինջ իդէալիզմը, ինքնոչնչացման խելայեղ տենդը, մեռնելու այն յուզիչ, շնաշխարհիկ պատրաստականուԹիւնը, որ բնորոշում է ռուս երիտասարդուԹեան բուռն մարտնչող, յեղափոխական տարրերը,—այդ բոլորը, տարաբախտաբար, դեռ հերիք չէ՝ տանելու համար ազատագրուԹեան ծանր խաչը այս սարսափելի աշխարհում, մղելու համար կեանքի անիւը դէպի Գաղափարի յաղԹանակը։

Աշխարհը մի այլ պահանջ ունէր։ Պէտք էր գիտենալ ոչ միայն մեռնել — ասում է նա — այլ և ապրել, այլ և շեշտուել, այլ և յաղԹել ըստ կարելւոյն արագ ու դիւրուԹեամբ, ըստ կարելւոյն քիչ զոհերով ու աւերածով։ Պէտք էր հարԹել այդ յաղԹանակի երկարաձիգ ու քարքարոտ ճանապարհը, վարել նրա դժուարին գործողուԹիւնները, համաձայն կեանքի—ոչ միայն Թէօրիայի—համաձայն բիրտ ու դժնդակ իրականուԹեան—ոչ միայն պատրաստ „ֆորմուլների"—պահանջներին ու հրամայականներին։

Այդտեղ ահա ժամանակակից քննադատուԹիւնը անողոք է ռուսական ինտելիգենցիայի, ռուս պայքարող ու ղեկավարող ընդհանրուԹեան նկատմամբ։

Այդտեղ—նրա ԹուլուԹիւնը։

ՅեղափոխուԹեան գաղափարը Ռուսաստանում սկզբից ի վեր—վաԹսունական Թականներից—անբաժան կապած է սոցիալիզմի գաղափարի հետ։ Երկու գաղափարները պարզապէս ձուլած են։ Այդ հանգամանքն է որ, կարելի է ասել, ստեղծել է Ռուսաստանի համար եզակի մի դիրք համաշխարհային յեղափոխական տարեգրուԹեան մէջ։ ՅեղափոխուԹիւն և Սոցիալիզմ սկզբից ի վեր դիտւում էին, որպէս փոխադարձ լրացուցիչներ. յեղափոխուԹիւնը առանց սոցիալիզմի, քաղաքական պրոպագանդը առանց սոցիալականի՝ Թւում էր անհնարին, անըմբռնելի։

Երկու էուԹիւնների այդ սերտ, անանջատ միաւորումը ռուս ազատագրական դիւցազներգուԹեան մէջ ունէր պատմական, սոցիալական և հոգեբանական իր դրդումները։

1. Արևմուտքը արդէն կատարել էր իր քաղաքական յեղափոխուԹիւնները։ Նրանց հետևանքը որոշ տեսակէտով—անվիԹարական էր, վհատեցուցիչ։ Բուրժուազիան փոխարինել էր աւատականուԹեանը, իր ձեռքն էր առել քաղաքական իշխանուԹիւնը և միահեծան օգտւում էր նրանից՝ աշխատաւոր դասակարգերին կեղեքելու, նրանց անտեսապէս ու հոգեպէս ստրկացնելու նպատակով։

Այդ իրողուԹիւնները մտածել տւին ռուսական շարժման ղեկավարներին... Եւս առաւել, որ Ռուսաստանում գիւղացիական, ագրարային հարցը իր հսկայ ծաւալով պէտք է լինէր անխուսափելիօրէն ու հրամայականօրէն՝ ամեն մի յեղափոխական վերիվայրումի կենտրոնական խնդիրը։

2. Սոցիալական Թէօրիաների տարածելուն Ռու-

սաստանի անդրանիկ յեղափոխական շրջերի մէջ քիչ չը նպաստեց և այն հանգամանքը՝ որ մի շարք ռուս ականաւոր մտածողներ և շարժման ռահվիրաներ — Հերցենից, Չերնիշեվսկուց ու Լավրովից մինչև Պլեխանով, Աքսելրոդ և այլն—վաղուց ամենասերտ բարեկամական յարաբերութեան մէջ էին Եւրոպայի հռչակաւոր սօցիալական ռէֆօրմատօրների, վերանորոգիչների հետ։

Այդ ռահվիրաները պատկառոտ ուշադրութեամբ ականջ էին դնում արեւմտեան յուզուած կեանքի ելևէջներին, որդեգրում էին սօցիալական փիլիսոփաների այլևայլ տեսութիւնները, իւրացնում ու քարոզում էին մերթ բառացի հարազատութեամբ, մերթ փոփոխելով ու լրացնելով (Պետր Լավրով), մերթ նոյնիսկ սեփական թէօրիաները յօրինելով ու հակադրելով (Միխայիլ Բակունին)։

Հեգելեանիզմն անգամ ունեցաւ իր ձախակողմեան թեւի մէջ, Ֆօյերբախների, Պրուդօնների, Մարքս ու Էնգելսների շրջերում՝ ռուս նշանաւոր դէմքեր, Բակունին, Օգարեօվ և ուրիշներ, իբրև խանդավառ երկրպագու։

Գինովութեան շրջան էր—թէօրիական բուռն յափշտակութիւնների և պրոպագանդի անդրանիկ շրջանը։ Կորացած իրենց հայրենիքում երկաթակուռ լծի տակ, ճաշակած ասիական ամենադաժան բռնակալութեան քաղցրութիւնները, այդ մարդիկ, բնականաբար, կլանում էին ագահութեամբ արեւմտեան ը մ բ ո ս տ մ տ ք ի բոլոր խիզախ պատւիրանները, ընդունում էին գրկաբաց ամենակարմիր վարդապետութիւնները, որ և եռանդով պատւաստում էին—դեռ ա յ ն ժ ա մ ա ն ա կ—Ռուսաստանի խոպան հողի վրայ։

Ս օ ց ի ա լ ա կ ա ն խ ն դ ի ր ը ամուր դարբնւում է քաղաքականի հետ։ Թէ Հերցենի ու իր „Կոլոկոլ“-ի աշխարհահայեացքում, թէ Բակունինի ու Նեչաեւների, թէ Չերնիշեվսկու, Լավրովի ու իր ստեղծած „Նարօդնայա Վօլիա“-ի *) և թէ յետագայ մարքսիստական սօցիալ-դեմօկրատիայի ծրագիրներում՝ սօցիալիզմը և „կօմմունիստական վերիվայրումը“ — անկիւնաքարն է։ Մարքսիստների մօտ—ինչպէս կը տեսնենք—նա նոյնիսկ միակ գործօն, հրահրող նպատակն է, որի առջև բոլոր ուրիշ նպատակները նսեմանում են ու վերածւում սոսկ մ ի ջ ո ց ն ե ր ի…

Մի ծանրակշիռ իրողութիւն է դա, եզակի յեղափոխական շարժումների պատմութեան մէջ և որ ունի ահագին կարևորութիւն ընդհանուր, ռամկավարական առաջադիմութեան տեսակէտից։ Դա մի իրողութիւն է, որի զօրութեամբ հէնց մտիկ անցեալում—առաջին Դումայի փոթորկոտ, անմոռանալի նիստերի միջոցին — Ռուսաստանի առաջապահ մտաւորականութիւնը տւեց աշխարհին առողջ ու կորովի ռամկավարականութեան փայլուն ապացոյցներ, ընդունելով — մասնաւորապէս հողային հարցում—աննախընթաց „սօցիալական որոշումներ“…

Բայց դա մի իրողութիւն է, որ, դժբախտաբար, ստացաւ մի տեսակ երկսայրի սրի բնաւորութիւն Ռուսաստանում։

Այո, անտարակոյս. սօցիալական գաղափարների վաղհաս մուտքն ու արծարծումը լայնածաւալ կայսրութեան մէջ, տասնեակ տարիների պրոպագանդը մտաւորական, բանւորական, արհեստաւորական և գիւղացիական խաւերում ունեցել է և դեռ պիտի ունենայ իր անգնահատելի արգասիքները. ստեղծւել է ինտելիգենտ և գիտակից ուժերի մի հսկայական շտեմարան երկրի մէջ, առաջ է եկել—անգամ խուլ ու հեռաւոր անկիւններում — գաղափարական կուռ ու կազմ մի երիտասարդութիւն, տոգորւած մինչև ուղ ու ծուծ գիտութեան ու ռամկավարութեան ամենավերջին հրահանգներով,—մի բանակ, որ այսօր ճզմւած բռնակալական կապանքների տակ, վաղը, քաղաքական փոքր ինչ ազատ րէժիմի ներքոյ, պիտի գրոհ տայ, հեղեղէ կեանքի բոլոր օգտագործ ասպարէզները և պիտի տարածէ ամենուրեք ճշմարիտ դեմօկրատիզմի *) ռամկավարական գաղափարների կենսարար շունչը… Տասնեակ տարիների այդ „սօցիալական“ գործունէութեան շնորհիւ, Ռուսաստանը, թէև տակաւին ենթակայ բռնակալ րէժիմի անախրօնիզմին, իր ահագին մտաւորականութեամբ, իր կուլտուրական, առաջադէմ, կենդանի ուժերով՝ այսօր թերևս շատ աւելի մօտ է կանգնած բուն մարդկային քաղաքակրթութեան նպատակներին, իդէալներին, քան դիցուք արևելեան, քաղաքականապէս վաղուց ազատագրւած որևէ պետութիւն,—մի Բուլգարիա, մի Ռումանիա, մի Յունաստան, մի Ճապօնիա… Չենք էլ խօսում Թիւրքիայի մասին, ուր քաղաքականապէս ազատ հռչակւած րէժիմը — առ ի չգոյէ զարգացած, արևմտեան գաղափարներով սնւած, հասարակագիտական ծանօթութիւններով օժտւած մտաւորականութեան—ոչ միայն զլացաւ առաջադրելու գէթ մի հատիկ սօցիալական կարևոր բարենորոգում, այլ և շտապեց խեղդել խանձարուրի մէջ ա զ ա տ ը ն կ ե ր ա կ ց ո ւ թ ի ւ ն ն ե ր ի իրաւունքը, արգելել սինդիկատները և նոյնիսկ ազգային քաղաքական կուսակցութիւնները։

Այդ բոլորը կայ։ Ռուսաստանի մէջ կան այդ խոշոր առաւելութիւնները։ Բայց կայ և մեդալի հակառակ երեսը։ Սօցիալիզմի յախուռն պրոպագանդը, իդէօլօգ-

*) Ռուս հռչակաւոր յեղափոխական „Նարօդնայա Վօլիա“ կուսակցութիւնը։

*) Չենք մոռանում, որ ռուսական, նոյնիսկ սօցիալիստ, մտաւորականութեան այդ դեմօկրատիզմը երբեմն—օրինակ, ազգայնական կնճիռների մէջ—տառապում է ներքին ցաւալի հակասութեամբ. այնուամենայնիւ, հարկ է խոստովանել, որ ռամկավարական ոգին ուժեղ է ռուս առաջադէմ մտաւորականութեան մէջ։

ների, երիտասարդութեան գլխապատառ յափշտակութիւնը հասարակական թէօրիաներով ունեցաւ և իր ստուերային, բացասական կողմը։ Ինքը սոցիալիզմը մեղաւոր չէր այդտեղ. մեղաւոր էին նրա կրողները, քարոզիչները։

Սոցիալիզմ և յեղափոխութիւն ոչ միայն անբաժան հռչակեցին — թէ մտաւոր և թէ գործնական մարզանքների աշխարհում—սոցիալական հարց և քաղաքական ազատութեան հարց՝ ոչ միայն ձուլեցին յեղափոխական տակտիկի մէջ, այլ և առաջինը հետզհետէ աւելի և աւելի շեշտեց, զօրացաւ, — ի վնաս վերջինի. „սոցիալականը“ հետզհետէ գերակշռեց „քաղաքականին“, այն աստիճան, որ սոցիալիստական աշխարհհայեացքի զարգացման վերջին հանգրուաններում, մարքսիզմի տիրապետութեան օրով, ռուս յեղափոխական մթնոլորտում նկատելի էր արդէն մի տեսակ քաղաքական անտարբերութիւն։ Սոցիալիզմի, թէօրիաների, „դասակարգային“ նշանաբանների խլացուցիչ ժխորի մէջ հալւել էր կամ հալւելու վրայ էր քաղաքական իրաւունքների նուաճման հարցը, հալւեր էր մանաւանդ բուն, ազգու, ռազմական տակտիկը...

Այդ է մասամբ պատճառը այն տխուր ճակատագրականութեան՝ որ Հղթայակապ Վիթխարին մինչև օրս տակաւին յամառում է իր դիրքի մէջ, որ Ռուսաստանի „քաղաքական սայլը“, Կռիլովի արտայայտութեամբ, դեռ մնում է իր տեղում։

Կրկնում ենք, սոցիալիզմը մեղաւոր չէր այդտեղ։ Մեղաւոր էր ռուսական ինքնատիպ, նեղցւած, ձևափոխւած սոցիալիզմը։

„Նեղցւած“՝ քանի որ Նրան յիրաւի պակասել է—մանաւանդ վերջին շրջանում—այն լայն, ռէալիստական ըմբռնումն ու ոգին, որ յատուկ է համաշխարհային սոցիալիզմին։ Դրա տեղ իշխել է ռուս մտաւորականութեան մէջ անզուսպ թէօրիամոլութիւնն ու ուտոպիզմը, իսկ մասնաւորապէս սոցիալ-դեմոկրատների աշխարհում՝ մոլեռանդ, աղանդապաշտ դոքտրինեօրութիւնը, դասակարգային պայքարի նեղ, անհամբերող, միակողմանի հասկացողութիւնները և արհամարհոտ վերաբերումը դէպի այն ամենը, ինչ որ դուրս է „դասակարգային“ շրջանակներից։

Այդ բոլորի հետ — մի անսահման, կռապաշտութեան հասնող գաղափարականացում ու ջատագովում այս կամ այն ճնշւած հասարակական դասակարգի, նրա պատմական առաքելութեան, նրա տարերային, համարեա „դիւթական“ զօրութեան։ Մի գաղափարականացում, որ զերծ չէ որոշ միստիցիզմից։

Այդ վերջին գիծը արդէն ընդհանուր է բոլոր ռուսական կուսակցութիւններին։ Այդ միստիկական պաշտամունքի նիւթը երբեմն „Նարոդն“ էր (ժողովուրդը), յետոյ այն դարձաւ պրոլետարիատը, գործաւոր դասակարգը։

„Նարոդը“ Բակունինների, Տկաչեոֆների ու Լավրոֆների աչքում կարլայլեան անմոռուչ Վիթխարին էր, որ մրափում էր անթեղւած կրակի նման, բայց որ շուտով, ռաղմի շեփորը հնչելուն պէս, պիտի արթնանար և ահագնագղորդ տարերքի նման պիտի սասանեցնէր տիեզերքը։

„Նարոդը“ ունէր իր խորունկ արգանդում բոլոր ազնւագոյն բնազդները, բոլոր երկրաւոր առաքինութիւնները“... Պէտք էր միայն մշակել նրանց, զարգացնել ու կատարելագործել։

„Նարոդը“, ռուսական „Նարոդը“, իր „Միր“-ով, համայնական հողատիրութեան իր հռչակաւոր սիստեմով, իր սրտառուչ նահապետական բարքերով՝ թւում էր դեռ 60-ական թւականների մի կարգ ռուս սոցիալիստների, որպէս մարդկութեան ամենաբնտիր հատւածը, որ արդէն իսկ բուն խարիսխն է կոմմունիստական իրաւակարգի, որ պատրաստ է իրականացնելու իր ծոցում—սոցիալիզմը *)։

„Նարոդը“ պատրաստ էր արդէն... Շարժումը պիտի պայթէր անյապաղ ու զանգւածօրէն, տարերային անհրաժեշտութեամբ... Այդ հաւատը կար „ժողովրդասէր“ սոցիալիստների մէջ և նա էր, որ հնչեցնում էր տասնեակ տարիներ շարունակ կախարդական մարտահրաւէրը. „Դէպի ժողովո՛ւրդ“... Նա էր, որ մղում էր անիշխանական ղեչաեվներին դէպի յուսահատ, արիւնալի գործողութիւններ, որոնցով պիտի ոտքի կանգնեցնէին մեծ հսմրին։ Մարդիկ վառւած խօլական բանդագուշանքներով, թափահարում էին մոլեգնօրէն կարմիր դրօշը, ազդարարում էին անդադար հսկայական Բաստիլի մօտալուտ փլատակումը, զանգահարում էին բոլոր ուժով իրենց գուրգուրած, աստուածացրած „Նարոդի“ ականջներին, զանգահարում էին... անապատի մէջ...

„Քա՞րը քարի վրայ չը պիտի մնայ“ — ճչում էին բակունիստները 60-ական թւականների վերջերում։ Նրանց ձգտումն էր՝ հրով, սրով, ուժանակով աւեր ու

*) Այդ լաւատեսութիւնը մեծ դերել, չենք ուզում միանգամայն ճանաչել ռուսաց համայնքի սոցիալական մեծ արժէքը։ Իրաւ է, որ համայնական հողատիրութեան այն սիստեմը, որ եղել է բաղմակիրթ մարդկութեան անյիշատակ ժամանակների սեփականութիւն եւ որ պատմական տարապայման հանգամանքների շնորհիւ յարատեւել է մինչեւ օրս Ռուսաստանում եւ ուրիշ մի շարք կիսակոլոնիալական երկրներում, հանդիսանում է, անկասկած իր բազմաթիւ արատներով, որպէս մի խոշոր իրողութիւն, որպէս համեմատաբար նպաստաւոր հող սոցիալիստական սիստեմների պատաստման համար։ Այդ իրողութիւնը խոստովանում էր եւ մարքսիզմի հայրը, որ 1882-ին, ի պատասխան ռուս սոցիալիստների մի հարցումին, պատասխանում էր իր հայեացքը Ռուսաստանի համայնքի ու նրա հողատիրութեան մասին։

„Եթէ—ասում էր Կարլ Մարքս—ռուսական յեղափոխութիւնը (բաղմակամը. ԽՄԲ.) ազդանշան ծառայի Արեւմուտքի բանւորական յեղափոխութեանը, այնպէս որ երկուսը լրացնեն փոխադարձաբար, այդ դէպքում ժամանակակից ռուս համայնական հողատիրութիւնը կարող է դառնալ ելակէտ կոմմունիստական զարգացման համար“։

փլատակ դարձնել հին Ռուսաստանի բովանդակ շէնքը, որի աւերակներից ինքնին արդէն պիտի ծնէր կոմմունիզմը, զուտ ռուսական կոմմունիզմը, հիմնուած „միր“-ի, համայնական հզօր ու ազնիւ բնազդների վրայ։ Մուժիկը „ի ծնէ“ կոմմունիստ էր...

Քաղաքական իշխանութիւնը նուաճելու պէտք անգամ չը կար։ Բակունիստները քնաւ չէին էլ մտածում նախ ձեռք բերել քաղաքական ազատութիւններ։ Ոչ, „այդ ազատութիւնը — բուրժուազիայի ազատութիւնն է“... Ռուս ժողովուրդը պէտք չունէր էւոլիւցիայի փոխանցական աստիճանների, նա միանգամից պիտի անէր հսկայական թռիչքը՝ ստրկութիւնից դէպի կոմմունիզմ, որի մէջ ինքնին պիտի հալուէին բոլոր շղթաները։ Ռուս ժողովուրդը պիտի տար մի եզակի դաս, մի աննախընթաց օրինակ քաղաքակրթուած մարդկութեանը, նրան կանխելով ու գերազանցելով։

70-ական թուականները — աւելի ալէծուփ ու մրրկոտ։ Ասպարէզ են իջնում „Նարոդնայա Վոլիա“-ի տիտանները։ Շարժումը ստանում է փոքր ինչ աւելի ռէալիզմ, փոքր ինչ աւելի „իրապաշտ“ բնոյթ։ Սոցիալիզմի, կոմմունիզմի թէօրիաները, դարձեալ, անշուշտ, մեծ տեղ են բռնում պրօպագանդի մէջ, բայց քաղաքական ազատութիւնների նուաճման հարցը ճանաչւում է, որպէս մերձաւոր նպատակ։ Բռնակալութիւնը նախ պէտք է տապալել...

Սակայն բլանկիզմն է տիրապետողը... Յեղափոխականները զինւորագրւում են ինտելիգենցիայից. նրանք քնաւ չեն էլ հոգում ժողովրդային զանգուածների մարզելու, յեղափոխական ճակատամարտների համար նրանց պատրաստելու։ Բաւական է թւում մի բուռն հերոսների ըմբոստացումը. բաւական են թւում անհատական և խմբական դաւադրութիւնները, խլրտումները, տերրօրային հարուածները։ Ժողովրդային ազատագրութեան հսկայ գործը — գործն էր մի բուռն դաւադիրների։ Մի չնչին փոքրամասնութիւն — վճռական ու կորովի — պէտք է տիրանար դաւադրական ճանապարհով քաղաքական իշխանութեանը, պէտք է հաստատէր յեղափոխական դիկտատորութիւն և պիտի մտցնէր բաղձալի իրաւակարգը... „Ժողովուրդը“ արդէն պատրաստ էր...

Խորտակւեց և այդ չնչին փոքրամասնութիւնը բէժիմի անողոք հարուածների տակ։ Ռուսաստանի հսկայածաւալ անապատից չքացան նաև մի քանի մանրիկ ու զովասուն օազիսները։ Եւ „Նարոդ-Վիթխարին“ շարունակեց մրափել ըստ առաջնոյն, իր անխռով, ստրկական մրափով...

Այդպէս էին կուլ մեթոդները։ Խիզախ, հերոսական երազողներ, որ քայլում էին բռնակալութեան անծայրածիր լաբիւրինթոսում, խարխափելով ու տրորւելով, բայց միշտ անվեհեր ու անընկճելի, միշտ հաւատալով „Նարոդ“-սֆինքսի աշխարհասասան կարողութիւններին, միշտ սեփական ցանկութիւնները իրականութիւն դարձնելով։ Իդէալիզմ՝ որ սահմանակցում էր ուտոպիզմի հետ։ Ուտոպիզմ՝ որ վսեմ ու հրապուրիչ էր իդէալիստական հզօր շաղախով...

Յաջորդ սերունդը կտրեց թեւերը բլանկիստական այդ խիզախ ու սրաթռիչ արծւի...

80-ական թուականների վերջերն էին, — ռուսական մարքսիզմի արշալոյսը։ „Նարոդ“-կուռքը չքանում է. նոր գործիչները արգահատանքով երես են դարձնում նրանից. այդ „դաւաճան“ ֆէտիշը, որ խորտակեց իր ազատատենչ երկրպագուների քաղցր ու վսեմ պատրանքները, այդ դժնդա՜կ քուրմը, որ պաղ, անայլայլ անտարբերութեամբ յետ էր մղում իր լաւագոյն զաւակներին և լիզում էր իր արիւնով խոնկ ներկուած թաթը...

Բայց մի ուրիշ կուռք փոխարինեց նրան — Պրօլետարիատը։

ԹԻՒՐՔԻԱ

ՆԵՐՔԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԹԻՒՐՔԱՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Կ. Պոլիս

Թիւրքական ցահմանադրութենէն և քաղաքական ազատութենէն ետքը Թիւրքահայ կեանքին մէջ երևան եկան շարժումներ և հոսանքներ, որոնք պատմական նոր ժամանակաշրջան կազմելու բնոյթն ունին։ Քաղաքակրթական և հասարակական տարբեր ուժերու հակամարտութիւնը և տնտեսական ու քաղաքական տարբեր դասերու բաղխումը, մերթ շեշտակի և մերթ մեղմ արտայայտութեամբ, կը լեցնէ վերջին տարւայ հայկական կեանքը։ Մեր իրականութիւնը հանդիսատես է Թիւրքիոյ մէջ այնպիսի ուշագրաւ և նշանակալից երևոյթի, որուն նմանը յաճախ չէ պատահած սուլթաններու անգոյն ու անկերպարան տիրապետութեան ներքոյ։

Համիդեան քաղաքականութիւնն ու վարչակարգը այնպիսի մթնոլորտ էր ստեղծած Թիւրքիոյ հողին վրայ, որ, եթէ ոչ անկարելի, յամենայն դէպս շափազանց դժւարին էր դարձած քաղաքակրթական և գիտական հակամարտութիւնը։ Հայ կեանքը ևս, և մանաւանդ հայ կեանքը, կը գտնւէր ընդհանուր պետական իրաւակարգի ազդեցութեան ներքոյ և հազիւ կ'օրօրէր իր նիւթական գոյութիւնը։ Ընդհանուրի մտահոգութիւնը ուղղւած էր գազանաբարոյ և անիրաւ քաղաքականութեան մը դէմ, որ կանգնած էր ամենուրեք և կըսպառնար ամենուն։ Հայ հասարակութեան մէկ մասը — հակաժողովրդական տարրը — համակերպած տիրապետող վարչաձևին, երբեմն նաև մեղսակից, գիտակցաբար թէ անգիտակցաբար, Համիդեան իրաւակարգին՝ քարշ կուտար իր գոյութիւնը, ամենևին չմտածելով և չցաւելով թերևս, որ նոյն քաղաքականութեան պատճառով կը

հնձւեր հայ աշխատաւոր ժողովուրդը և կը չորանային ազգութեան արմատները։ Մեր „երևելիները“ և համիդասէր „բարձրաստիճան“ կղերականները թերևս ոչինչ չէին կորցներ տիրող իրաւակարգի մէջ։ Անոնց դիրքերը և աթոռները ապահով էին այսպէս թէ այնպէս, անոնց „հայրենիքը“ երջանիկ էր Համիդի հայրախնամ հոգատարութեան ներքոյ և անոնց „հօտը“ լիուլի վայելելով բոլոր բարիքները՝ պարտաւոր էր որդիական շնորհակալութիւններ մատուցանել կայսերական գահոյքին։

Ազգի մէկ ուրիշ մասը, արմատական և ժողովրդական, գաղափարական և անձնուէր՝ մեր արիւնաքամ հայրենիքի իսկական ներկայացուցիչները իրենց եռանդի և կարողութեան բոլոր քանակը ի սպաս էին դրեր ազատագրական գործին, կամովին և գիտակցաբար, ազատ էին թողեր մեր հասարակութեան անբարոյ և հակաժողովրդական տարրերը, որպէսզի կարենային յաջողութեամբ պայքարել արտաքին սարսափելի թշնամու դէմ և չ՚ընկրկէին անհաւասար ու արիւնոտ մարտին մէջ։ Այսպէս էր մեր ներքին կեանքը։

Քաղաքական և պետական ընդհանուր պայմանները և տիրապետող կառավարական ձևերը ուրիշ բովանդակութիւն չէին կրնար հանդուրժել հայկական իրականութեան մէջ։

Իրաւակարգը փոխուեցաւ սակայն։ Համիդեան քաղաքականութիւնը դարձաւ պատմութեան սեփականութիւն։ Երիտասարդ Թիւրքիան, որքան ալ վարանոտ, որքան ալ անվճռական, երկիրը դրեց սահմանադրական ճանապարհի վրայ և հայ ազգաբնակութիւնը Ատանայական եղեռնէն ետքը տարի մը ապրեցաւ քաղաքացիի ազատ կեանքով...

Ինքնին հասկանալի է, որ քաղաքական այսպիսի պարագաներու մէջ պիտի արթննային հայ ժողովրդի քաղաքակրթական տարբեր և հակամարտ տրամադրութիւններն ու հոգեբանութիւնները և շարժման մէջ մտնէին։ Արտաքին թշնամու առժամանակեայ, թերևս մշտական վերացումը ծնունդ տուաւ ներքին, ազգայնական հակամարտութեան։ Հասարակական դասերը շերտաւորուեցան, բանակները զուեցան և մեր ներքին մթնոլորտը տարբեր ըմբռնումներու ու տարբեր շահերու մրցարան դարձաւ։ Պայքարը, քաղաքակրթական, հասարակական, դասակարգային ճակատամարտը պայթեցաւ։ Բնաւ չը վրդովուինք հանդէպ այդ աղմկոտ իրարանցումին ու չցաւինք երբէք անոր ցնցումներուն ի տես։ Ատոնք ամենը անհրաժեշտ են, որպէսզի մեր ներքին կեանքը բիւրեղանայ շուտով և դիմէ դէպի քաղաքակրթութեան և մարդկութեան բարձրագոյն իդէալները։

Շարժման և պայքարի հիմքերը կը կազմեն ռամկավարութեան և ժողովրդական գաղափարներն ու շահերը մէկ կողմէ. աղայական և կղերական տիրապետութիւնն ու ասոնց օգուտները միւս կողմէ։ Այս հիմնական հակամարտութեան վրայ կը յաւելանայ և անոր շուրջը կը դառնայ նաև ընկերվարութեան գաղափարը, որ կը մատնանշէ շահագործողի և շահագործուողի յաւիտենական հակադրութիւնը, որ կ՚աշխատի հայ կեանքին մէջ սերմանել տընտեսական հաւասարութեան սկզբունքները, որ կը ձգտի քաղաքական ազատութիւնը իրական ազատութիւն դարձնել և միանգամ ընդմիշտ վերացնել մարդկային ստրկութեան պատճառները։

Առաջին գաղափարը, այսինքն ռամկավարութեան և աղայական տիրապետութեան հակամարտութիւնը, ժողովրդական և հակաժողովրդական շահերու պայքարը նորութիւն չէ թիւրքահայ գրականութեան ու հրապարակագրութեան մէջ։ Համիդեան վարչակարգէն տակաւին շատ տարիներ առաջ, բուն Հայաստանի հողի վրայ Խրիմեանի „Վասպուրականի Արծուի“-ն արդէն հիմք էր դրած այդ նշանակալից պայքարին յուզիչ ու ուշագրաւ սկզբնաւորութեամբ մը։ Ցայտնի է թէ ինչպէս „ռամիկ ժողովրդի“ թշնամիները, հասարակութեան „վերին շերտերը“—աղաներ, էֆէնտիներ, կղերականներ—պախարակելի համաձայնութեամբ միացան, անգամ քիւրդ բէկերու և կառավարական պաշտօնեաներու հետ, որպէսզի աւելի յաջողութեամբ տապալեն Վասպուրական Արծուի ժողովրդական գործունէութիւնը և քարոզչութիւնը։

Վօսֆօրի ափերուն ներկայիս մէջ կատարուող կղերական-աղայական և ժողովրդական պայքարը իր էական գծերով տեղի է ունեցած մեզմէ կէս դար առաջ, Վասպուրականի և ապա Տարօնոյ հինաւուրց և պատմական հողերուն վրայ։

Խրիմեանի և իր աշակերտներու հրապարակագրական և ժողովրդական գործունէութենէն զատ, Թիւրքիոյ մայրաքաղաքը ևս ունեցած է իր կարևոր բաժինը այդ նշանաւոր ճակատամարտին մէջ։ Զափազանց հրահանգիչ է այն բանավէճը, որ տեղի ունեցաւ ռուսահայ հռչակաւոր հրապարակագիր Միքայէլ Նալբանդեանի և Զամուռճեան պատուելիի միջև։ Առաջինը իրեն յատուկ կորովով և ժողովրդասիրական անհուն թափով յետ կը մղէր կղերականներու և առհասարակ աղաներու „խնամքը“ հայ հասարակութեան վրայէն, կը խարազանէր հակաժողովրդական տարրերու բոլոր անիրաւ արտօնութիւնները և բարձրաձայն ու մեծ տաղանդով կը պաշտպանէր „ռամիկ“, աշխատաւոր ժողովրդի անկապտելի իրաւունքները։ Զամուռճեան պատուելին մէկ մտահոգութիւն ունէր միայն—կղերական և շահագործող դասերու անվիճելի տիրապետութիւնը և առաջնութիւնը։ Պայքարը հետզհետէ աւելի ու աւելի ծաւալեցաւ։ Մայրաքաղաքի մէջ Նալբանդեաններու և Զամուռճեաններու կողմնակիցներ առաջացան։ Հասարակութիւնը բաժնուեցաւ երկու հակամարտ կուսակցութիւններու։ Մէկը յառաջադէմ, ազատական, ռամկավար և ժողովրդասէր, միւսը՝ յետադէմ, պահպանողական և հակաժողովրդական։

Այսօրուայ թիւրքահայ կեանքին մէջ նորէն կը շարժուին և կը գործեն հոգևոր ժառանգները այդ վաղեմի կուսակցութիւններու։ Խրիմեան և Նալբանդեան կը վերապրին նոր սերնդին առաջամարտիկ ու գաղափարական շարքերուն մէջ։ Անոնց գործունէութիւնը ներկայիս ժողովրդասէր և ազատական շարժումներու արժատը կը ներկայանայ։

Նոր և պատահական չէ, ուրեմն, մեր աչքին առջև ծաւալուող ճակատամարտը. նոր չեն մանաւանդ անոնք, որոնք հիանալի եռանդով առաջ կը տանեն ժողովրդական իրաւունքներու դժուարին և արդար դատը։ Տասնիններորդ դարի հայ մտքի լաւագոյն ներկայացուցիչ-

ները և մեր գրականութեան ամենախոշոր սիւները այդ շարժման հոգևոր հայրերը և ներշնչողները կը հանդիսանան։

Հակաժողովրդական տարրերու յաղթանակը այլ ևս վայրկենական է և վաղանցիկ. անոնց կարողութիւնը գաղափարական և ներքին ոչ մէկ ժողում ունի։ Բնականոն պայմաններու մէջ և պետական-քաղաքական քիչ թէ շատ նպաստաւոր վարչակարգերու ներքոյ՝ անոնց վերադարձը և անոնց առաջնութիւնը անկարելի է երևակայել։ Համիդեան քաղաքականութեան ժամանակները միայն անոնք կրնան սնանիլ և զարգանալ. արտաքին խոշոր աղէտներու հովերով միայն անոնք կրնան դեր խաղալ և աթոռներ գրաւել։ Հայութիւնը երբէք չէր կրնար հանդուրժել այնպիսի ղեկավարներ — թէ աշխարհական և թէ կղերական — որոնք տասնեակ տարիներ շարունակ նրա անկոչ տէրերը հանդիսացան, եթէ գոյութիւն չունենար այնքան սարսափելի և ահաւոր բռնակալութիւնը։

Շափազանց կրթողական է և նշանակելի այս զուգադիպութիւնը, որ տարօրինակ ճակատագրականութեամբ իրագործուեցաւ նաև բռնակալութեան անկման օրերուն։ Արտաքին թշնամիներու վերացման հետ միանգամայն վերացան և անոնք, մեր ճակատագրի երէկուայ տէրերը։

Մեր հասարակութեան ներքին կեանքի և հաւաքական հոգեբանութեան տեսակէտէն այս երևոյթը վերին աստիճան ուշադրութեան արժանի է։ Ասիկա միայն մէկ բան կ՚ապացուցանէ. այն, որ մեր հասարակական կառուցուածքի մէջ չկան այլևս այնպիսի տարրեր, ներքին այնպիսի ոյժեր, որոնք ի վիճակի ըլլան պաշտպանել մեռնող դասակարգը և ոչնչութեան դատապարտուած աշխարհահայեացքը։ Տասնեակ տարիներու մեր լաւագոյն ուժերը սպառուեցան ժողովրդի վրայէն վերցնելու անոր թշնամի տարրերը։ Հայ մտքի բարձր յղացումները տարիներ անընդհատ այդ նպատակով գործադրուեցան։

Այսօրուայ սերունդը թէ Թիւրքիոյ և թէ Կովկասի մէջ տեր է այն նուաճումներուն, որոնք կատարուեցան տասնիններորդ դարի ամբողջ տարածութեան վրայ։ Ներկայ գաղափարական մտաւորականութիւնը կը կատարելագործէ, կը լրացնէ և կը զարգացնէ այն, ինչ որ սկսուած էր անցեալի մէջ։ Անոր ճանապարհը բաց է և գործունէութեան հիմքերը արդէն պատրաստ։

Թիւրքական բռնապետութեան տապալումէն և սահմանադրական կարգերու հաստատութենէն ետքը՝ ժողովուրդը և մարտնչող հասարակութիւնը նոր իդեալներ կը սնուցանեն։

Այստեղ է, որ ընկերվարութեան գաղափարը անհրաժեշտ և անխուսափելի կը դառնայ։

Եւրոպական ազգերը փորձեցին արդէն, որ քաղաքական ստրկութեան վերացումը անհատի և մարդկութեան ազատութիւնը չէ ապահովեր կատարեալ կերպով. անոնք տեսան, որ քաղաքական հաւասարութեան իրողութիւնը չափազանց պակասաւոր է, թերևս ապարդիւն՝ առանց իրական, տնտեսական հաւասարութեան։ Այժմեան մարդկութեան նոր իդեալն է ատիկա և քաղաքակրթութեան հրամայական պահանջը։— Ազատագրել աշխարհիս մեծամասնութիւնը դրամատէր փոքրամասնութեան տմարդի ճնշումներէն և անսիրտ բռնակալութենէն։

Հայ միտքը թուլամորթ և անարժան պիտի ըլլար՝ եթէ չմիանար համաշխարհային այդ նոր իդեալին։ Հայ ժողովուրդը իր ինքնատիպ ստեղծագործութիւններով և բնական, առողջ ու այրական իմաստութեամբ վաղուց հետէ զգացեր և արտայայտեր է սաղմերը մարդկութեան այդ հոյակապ գաղափարներու։ Եւ հայ մտաւորականութիւնը չէր կրնար անշուշտ անուշադիր ըլլար դէպի նորագոյն քաղաքակրթութեան նշանախօսքը, որ յղացան հանճարաւոր ժողովուրդները և որ մեր ժողովուրդինն ալ է։

Թիւրքիոյ մայրաքաղաքին մէջ ներկայիս արծարծուող դասակարգային գիտակցութեան քարոզը և միջազգային հաւասարութեան գաղափարը օտարամուտ, պատահական և յանկարծական երևոյթ չէ մեր ազգի և մեր գրականութեան համար։ Վերջին քսան տարուան յեղափոխական-արմատական սերունդը մէկէ աւելի անգամ յուզեր է այդ խնդիրը. Կովկասի մէջ ազատագրական և ժողովրդավարական բուռն և անմոռանալի օրերուն՝ հայ գրականութիւնն ու կեանքը այդ ճամբով ընթացան, յղացումի և իրագործումի անգամ ուշագրաւ փորձերը ըրին։ Եթէ մոռնանք այդ բոլորը և կամենանք աւելի հեռուն երթալ, դէպի տասնիններորդ դարու ռուսահայ նորագոյն գրականութեան վերածնունդը, հոն կը տեսնանք Միքայէլ Նալբանդեանի միշտ կորովի դէմքը, որ երկաթէ ձեռքերով և խռովեալ արիւնով մեզմէ մօտ կէս դար առաջ շարադրած է „Երկրագործութիւնը“, հայ ընկերվարական գրականութեան այդ հիանալի ու պերճախօս յուշարձանը։

Այսօրուայ սերունդը պիտի կրնա՞յ արդեօք անգիտանալ և արհամարհել բոլոր այդ նշանակելի սկզբնաւորութիւնները, բոլոր այն վեհանձն յղացումները, որոնք կատարուեցան մեր ժողովրդի ուրոյն ստեղծագործութեան մէջ, մեր մտաւորականութեան մէջ, մեր կեանքի ու գրականութեան մէջ...

Այսօրուայ ժողովրդական շարժման, ռամկավարական, ընկերվարական հոսանքներու արմատները կարծածէն աւելի խորն են և հաստատուն մեր պատմական կեանքին մէջ, որպէսզի կարելի ըլլայ կտրել զանոնք։

Մեր ժողովրդի արտաքին և ներքին հակառակորդները, գիտակցական և անգիտակից թշնամիները կրնան թերևս վայրկենաբար լռեցնել անոր լաւագոյն ստեղծագործութեան ձայնը — սակայն մեռցնել այն՝ երբէք չպիտի կրնան։

Որովհետև պատմութեան անիւը միայն մէկ ընթացք ունի — դէպի յառաջ։ Որովհետև քաղաքակրթութիւնը չի կրնար հանդուրժել մեռնող դասակարգերու և անհետացող աշխարհահայեացքներու վերադարձը...

ՌՈՒՍԻԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՒԱԾԸ

Մահացու հարուածն իջաւ.... Ֆինլանդիայի ավտոնոմիան (ինքնօրինութիւնը) նորէն թաղուեց օգոստափառ երդմնազանցի ձեռքերով...

Քանի՞ երրորդ անգամը... Եւ դժբախտ երկիրը համ-

բերում է. նա դեռ ունի համբերութեան, տոկունութեան առատ պաշար։ Նա դեռ որոշած է սահմանափակել „կրաւորական դիմադրութեամբ“։ Ուրիշ ի՞նչ ելք...

Անցեալ համարում ի ցոյց դրինք համառօտակի այդ սրտառուչ մարտիրոսութեան դրւագները։ Ակնարկեցինք և պատճառը, թէ ինչու պետերբուրգեան բարձր շրջաններում վերջերում առանձնապէս գարշում են Ֆինլանդիայից։ 1905-ի ազատութեան օրերից ի վեր՝ այդ փոքրիկ հայրենիքը դարձել էր մի Շվէյցարիա... Ապաստան ամեն տեսակ յեղափոխականների, ռուս բռնակալութեան զոհերի։ Բաւական չէր այդ. Ֆինլանդիան դարձել էր զօրեղ միջնաբերդ այն հոսանքի ու կուսակցութեան, որ ամենից ատելի է ցարական կամարիլային. — միջնաբերդ սոցիալիզմի։ Սոցիալիզմը՝ դաշնակցած ֆէմինիզմի հետ։ Ֆինն պարլամենտի ամենաստուար, ամենաազդեցիկ հատուածը—սոցիալիստական կուսակցութիւնն է, որի շարքերում 7—8 կին պատգամաւորներ։

Հասկանալի է, մի այդպիսի պարլամենտ հեշտութեամբ չի ճկի իր պարանոցը բռնութեան առաջ։ Նա շեշտեց միշտ „մեծ իշխան“ Նիկոլա II-ի հանդէպ իր հպարտ անկախութիւնը։ Նա ընդդիմադրեց Պետերբուրգի ամեն մի հրահանգին ու հրամանին՝ քաղաքավարի, բայց վճռական—Ոչ։

Միահեծան արքաները դիւրութեամբ չեն մարսում այդ տեսակ „ոչ“-եր։ Եւս առաւել՝ մի վայրկեանում, երբ Յեղափոխութեան հիդրան համարւում է արդէն ջախջախուած, երբ հսկայածաւալ կայսրութիւնը „խաղաղուած է“ ըէակցիայի յաղթական բազուկներով...

Աշխարհը գիտէր, որ չարաշուք մի դաւ է նիւթւում Ֆինլանդիայի դէմ, այնուամենայնիւ, դժւարանում էր հաւատալ, որ այնքան արկածալի փորձութիւններից, վիժուած պետական հարուածներից յետոյ՝ ռուս կառավարութիւնը այն աստիճան հեռու չէր գնայ, որ մէկէն ի մէկ վերջացնէ Ֆինլանդիայի ինքնօրինութիւնը։

Եւ սակայն, փաստը աչքերիս առաջ է։ Ցարի մի նոր „մանիֆեստը“ հրապարակի վրայ։ Այն միջոցին, երբ „հազար լճերի հայրենիքը“, գուցէ դեռ անտեղեակ Պետերբուրգի մէջ պատրաստւող դաւադրութեան, տօնում էր զատկի տօները,—նրա վրայից անցաւ յանկարծ այդ երդմնադրուժ մանիֆեստի աղէտաբեր շանթը, որ մահաղօղանջն էր ֆինլանդական ազատութեան...

„Սև Դուման“ դեռ պիտի „քննէ“ ազատասպան նախագիծը, ընտրւել է արդէն մի յանձնաժողով, 7 աջակողմեան, 7 հոկտեմբերեան, 6 կադետ, մէկ ձախակողմեան ներկայացուցիչներից։ Բայց ի՞նչ տարակոյս կարող է լինել այդ քննութեան ելքի նկատմամբ։ „Սև Դուման“ կը վաւերացնէ, կը նիւրագործէ սև նախագիծը։ Եւ այդպիսով կըսպառւի նոր ոճիրը ազատութեան դէմ, մարդկութեան դէմ...

Անսովոր զզւանք յարուցեց այդ նոր մանիֆեստը եւրոպական մեծ մամուլի մէջ։ Միանգամայն անսովոր տոն են գործ ածում՝ անգամ այնպիսի խոշոր օրգաններ, որոնք իրենց խոշորութեան զօրութեամբ իսկ՝ հարկադրւած են միշտ չափաւոր ու փափկանկատ լինել՝ նոյնիսկ հանդէպ ցարիզմի։ Ապշեցուցիչ բան է՝ կարդալ „Frankfurter Zeitung“-ի մէջ „արիւնոտ Նիկոլա“ և նման քաղցրանուշ որակումներ։ Իսկ ամենից արտառոցը պարիզեան „Temps“-ի բռնած դիրքն է։ Մի կորովի խմբագրականի մէջ նշաւակելով հանդերձ Ֆինլանդիայի դէմ նիւթւած նոր դաւը, նա միաժամանակ խնամքով քաղում է ուրիշ եւրոպական մեծ օրգանների ամենասուր արտայայտութիւնները ցարական մանիֆեստի ու նրա հեղինակի վերաբերմամբ։

Այդ արտայայտութիւններից մէկը պարզապէս ասում է.

„Զարմանալի չի լինի, եթէ շուտով հրապարակ գայ մի նոր տերրորիստ Շուման *), պատժելու այդ նոր ոճրի իսկական հեղինակին...

Այդ բոլորը, յիրաւի, անսովոր է։ Եւ իբրև այդպիսին՝ մխիթարական... Ա՜հ, սակաւապետ ենք, անշուշտ. գիտենք քչով բաւականանալ, քչով մխիթարւել ներկայ տխուր ու ահաւոր օրերում։ Բայց քիչ բան չէ այդ ցասումը եւրոպական կապիտալիզմի խոշորագոյն օրգանների կողմից, երբ մտածում էք, որ այդ կապիտալիզմը իր առատաձեռն փոխառութիւններով ազատեց մեր բռնակալութիւնը մահացու հոգեվարքից, տւեց նրան և տալիս է մինչև օրս էլ հնարաւորութիւն՝ շնչելու, կազդուրւելու և ջախջախելու Յեղափոխութիւնը...

ՍԻԲԻՐ

Սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան վերաբաններից երկուսը նորէն բռնեցին կամ պիտի բռնեն շուտով Սիբիրի ճամբան... Մէկը իբրև աքսորական, միւսը իբրև տաժանակիր։ Մէկը „Տատիկն“ է, հոչակաւոր կին-ռազմիկը, Բրեշկովսկայան։ Միւսը—Մինօրն է, ոչ նւազ ծանօթ և ոչ նւազ յարգւած յեղափոխական Ռուսաստանում։

„Տատիկը“ մօտ 70 տարեկան է արդէն և երկրորդ անգամն է ուղևորւում դէպի Տունդրաները։ Մինօրը 50 տարին հազիւ է լրացրել, բայց արդէն ծերունազարդ պատրիարքի տեսք ունի, — այնքա՞ն է տրորւել յեղափոխական կեանքի յորձանքներում, նահատակութեան դժնդակ զնդանների մէջ։ Նա էլ երկրորդ անգամն է—դէպի Սիբիր... Ամբողջ 8 տարի տաժանակիր աշխատանքների...

Ծանր, չափազանց ծանր է արձանագրել այդ երկու կենդանի յուշարկաւորումները։ Այն ճակատագրական ու չարաշուք նախազգացումը կայ՝ թէ այլ ևս չը պիտի վերադառնան... Ա՜հ, ռուսական ցաւատանջ մարտիրոսագրութիւն... Ցամենայն դէպս Նիկոլա II-ի կառավարութիւնը ձեռք կ'առնէ անհրաժեշտ միջոցները, որպէս զի այդ երկու հոյակապ դէմքերը իսպառ կորչին յեղափոխութեան համար, կամ թէ վերադառնան, իբրև անօգուտ աւերակներ... ինչպէս Չերնիշեվսկին։

Որովհետև դահիճները տեսան, զգացին երկուսի խոշոր մարդկային ու յեղափոխական արժէքը. տեսան, թէ ինչ հրաբխային հոգիներ են թագնւած այդ ծերունազարդ կերպարանքների տակ։ Երկուսն էլ բացարձակ յայտարարեցին, ի պատասխան դահճի հարցումին,

---

*) Տխրահռչակ Բօբրիկովին սպանող Ֆինլանդացին։

որ, այո՛, պատկանում են սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեանը։

Բրեշկովսկայան, աւելի յայտնի „Տատիկ“ անունով, սկսել է իր „առաքելութիւնը“ գիւղացիների մէջ դեռ 1873 թուից։ Գիւղը նրա պրօպագանդի նուիրական վայրն էր, մուժիկի թմրած գիտակցութիւնը արթնացնելը — նրա առաքելութեան նպատակը։ Եւ նա մինչև վերջն էլ եղաւ գիւղացիական աննման պրօպագանդիստ։ Իջել էր նոյն ազնուական դասակարգից, որից իջել էին ռուս յեղափոխութեան մի շարք ուրիշ պատկառելի դէմքեր։ Իր անվեհերութեամբ ու գաղափարական մաքրութեամբ նա արժանաւոր անդամներից մինն է ռուս կանանց հռչակաւոր „պլէադի“, որի մէջ փայլում են, յաւերժական փառքի լուսապսակով շրջապատուած, Սոֆիա Պերովսկայա, Վէրա Ֆիգներ, Վէրա Զասուլիչ և ուրիշներ։ Նրանց պէս ունեցաւ հերոսական վայրկեաններ, նրանց պէս ճաշակեց և մարտիրոսութեան դառնութիւնները։ 1873-ին ասպարէզ է մտնում և հետևեալ տարին արդէն Պետրոս-Պավլովսկի զնդաններում է։ Չորս տարի բերդարգելութիւն։ 1878-ին, իբրև մէկը պատմական 193-ից, դատապարտւում է 5 տարուայ տաժանակիր աշխատանքի, Վոլխովսկոյի, Շիշկոյի ու այլոց հետ։ Տաժանակիր աշխատանքն աւարտելուց յետոյ, քշւում է հեռու արևելեան Սիբիրի մի խուլ անկիւն։ Փախուստի փորձ անելով, նա վերստին, իբրև պատիժ, դատապարտւում է տաժանակիր աշխատանքների երկու ու կէս տարով։ Այդ ժամանակը ևս լրանալուց յետոյ, նա քշւում է Իրկուտսկ, ապա և Տօմսկ, Տօբոլսկ, ուսկից վերջապէս, 1897-ին, աջողւում է փախչել... ամբողջ 23 տարի Սիբիրում անցկացնելուց յետոյ։

Բայց Սիբիրից փախչելով, նա չի փնտրում ապահով տեղեր, այլ մտնում է Հայրենիք, Ռուսաստան և վերսկսում իր քարոզչական գործունէութիւնը գիւղացիների մէջ, ծածկւելով այլևայլ անունների տակ, թափառելով տեղից տեղ։ 900-ական թուերի սկզբում „Տատիկը“ Եւրոպա է, ծրնեվ, ուր մասնակցում է կուսակցութերթի խմբագրութեան... Կին-պրօպագանդիստը և սքանչելի գրող է, հրապարակախօս։

Դա մի անօրինակ կին էր։ Ռիգորիստ, խստաբարոյ, ամբողջապէս գաղափար դարձած... Յեղափոխութիւնը բռնել է նրա բովանդակ էութիւնը և նրա սրտի մէջ տեղ չի թողել ուրիշ որևէ մտահոգութեան համար։ Մերժել է անգամ հարազատ որդուն, որը իր մօր գաղափարներին հակառակ ուղղութիւն է բռնել... Մերժել է նրա տեսակցութեան առաջարկները Պետրոս-Պավլովսկի խուցերից... Մի ճշմարիտ կին-ամազօն, ամբողջապէս տարուած կուռ տենդով, սիրահար զէնքի ու ռազմական ժխորի... ասես բոլորովին առնացած։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս հրճւում էր մի օր Քրիստափորի իրեն նուիրած խոշոր ու գեղեցիկ ատրճանակով, թէ ինչպէս հպարտ էր այդ նուէրով։ Երկու մեծ պրօպագանդիստները գիտցան իրար գնահատել, կարճաւև ծանօթութեան միջոցին, և երբ քիչ յետոյ Բուլգարիայից հասաւ մեր վետերանի աղէտաւոր մահուան լուրը, „Տատիկը“ մէկն էր ջերմ, անկեղծ սգացողներից և նա իր ուժեղ գրչով շարադրեց Քրիստափորի խանդավառ ներբողը „Յեղափոխական Ռուսաստանի“ մէջ։

Այժմ նա ինքն է թերևս անխուսափելի կորստեան ծայրին... Զը համբերեց կին-ամազօնը եւրոպական իր աքսորի մէջ, Լեմանի ափերից անդադար ու անդիմադրելի թռիչքներ էր գործում նրա ռազմական հոգին դէպի բազմատանջ Ռուսաստանը, դէպի գիւղացիները։ 1905-ին, ազատութեան ծանուցման հետ „Տատիկը“ նորէն Ռուսաստան է, Վոլգայի աւազանում, նորէն իր սիրած գիւղացիների աշխարհում, ուր շարունակում է սոցիալիզմի, հողերի համայնացման և ինքնակալութեան վերջնական տապալումի պրօպագանդը։ 1907-ին ռուսական ժանդարմները, երկար տենդային ձիգերից ու ապարդիւն փորձերից յետոյ՝ ձեռք ձգեցին, վերջապէս, այդ թանկագին որսը — Կատարինէ Բրեշկովսկայան։ Ահագին ոգևորութիւն Պետերբուրգի բարձր ոստիկանական շրջաններում... „Տատիկը“ նորէն Պետրոս-Պավլովսկի նկուղներում, ուր մնում է մինչև դատավարութիւնը, դարձեալ ամբողջ 30 ամիս։

Ահա այդ գեղեցիկ, անօրինակ ու օրինակելի կեանքը։

Եւրոպական մամուլը խօսեց երկարօրէն կին-յեղափոխականի մասին, պատմեց նրա կեանքն ու դատավարութիւնը, ցաւ ու բողոք յայտնելով... Պարիզում տեղի ունեցաւ ժողովրդական բազմամարդ միտինգ դատապարտութեան առիթով... Ապարդիւն։ Ցարական ոստիկանութիւնը ձեռքից չը պիտի թողնէ հազւագիւտ որսը։

ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

VIII

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐ

Առաջ քան դիմել ազգայնական մրցումների պատճառաբանութեան ու լուսաբանութեան՝ մենք պէտք է դեռ փոքր ինչ կանգ առնենք երկու կէտի վրայ.

1) Ինչպէ՞ս է առաջանում ազգային զգացումը և ի՞նչ չափով է նա արտայայտւում ազգի այլևայլ դասակարգերի մէջ։

2) Ինչպէ՞ս կատարել ազգային առանձնայատկութիւնների գնահատումը։ Ուրիշ խօսքով.—Արժէ՞ արդեօք, նպատակայարմա՞ր է՝ պահպանել ու զարգացնել մի ազգի բոլոր առանձնայատկութիւնները, նրա բովանդակ, հաւաքական բնոյթը, թէ՞ գուցէ կան ճշմարիտ արժէքների հետ և կեղծ արժէքներ, որ պիտի ջանալ արմատախիլ անել այդ հաւաքական բնոյթից։

Եւ եթէ տեղին է վերջին հարցումը—ապա որտե՞ղ է արժէքների որոշման չափանիշը։

Այս հարցերին տուելիք պատասխանը կը լինի և մի տեսակ ամփոփումն՝ ազգայնական էութեան մասին մեր տուած դատողութիւնների։

***

Ասացինք նախընթաց յօդուածներում, որ կայ իւրաքանչիւր ազգային համայնքի մէջ ուրոյն հաւաքական բնոյթ։ Ցոյց տուինք նաև, թէ ինչպէս է նա ձուլւում, ինչ բնական ու հասարակական ուժերի ազդեցութեամբ ու գործակցութեամբ։

Այդ իրողութեան շնորհիւ, հայ-ան հատը դառնում է ըմբռնելի և ճանաչելի միմիայն իբրև անդամ մտքերի ու զգացումների այն ներդաշնակ համակարգութեան, որ կազմում է հայ ազգութիւնը և որ դարձնում է յիշեալ անհատին ոչ միայն մարդ, այլ և հայ-մարդ։ Եւ այդ հայ-անհատը փոխադրւելով մի այլ միջավայր, ցեղային, ազգայնական մի այլ մթնոլորտ՝ գիտակցում է անմիջապէս իր տարբերութիւնը շրջապատողներից, գիտակցում է, որ

այդ վերջինները տարբեր տիպի ու բնոյթի մարդիկ են, տարբեր է նրանց շարժելը, զգալը, մտածելը և արտաքին ազդակներին հակազդելու եղանակը։

Եւ այդ տարբերութիւնը աչքի է զարնւում տարաղդի մարդկանց միջև, չը նայեած այն հանգամանքին, որ կան նաև խոշոր տարբերութիւններ իւրաքանչիւր ազգի դասակարգերի ու արհեստների մէջ (պրոֆէսիոն), չը նայեած որ հոգեկան, մտաւոր, նոյնիսկ ֆիզիկական յատկութիւնները խիստ տարբերւում են, երբ անցնում ենք միևնոյն ազգի մշակից, գիւղացուց, արհեստաւորից դէպի մտաւորականը, ինտելիգենտը։

Մտքերի, զգացումների և կամքերի ինքնատիպ հիւսուածքը ամեն մի ազգի մէջ առաջ է գալիս համայնքի ու անհատի մշտնջենական փոխազդեցութիւնից։ Նա անցնում է ժառանգաբար սերնդէ սերունդ և կազմում է ազգային գիտակցութիւնը, ժողովրդի ոգին։

Մշտնջենական փոխազդեցութիւն կայ ազգի անհատների միջև, ինչպէս որ կայ գործարանաւոր մարմինների բջիջների միջև։ Պատմական զարգացման դարաւոր գործողութեան մէջ՝ մերթ ազգն է իր բարքերի ուժով բարձրացնում լքւող ու դահավիժող անհատներին, մերթ անհատն է իր եզակի հանճարով, իր արտակարգ բարոյական առաքինութիւններով արթնացնում ու բարձրացնում ազգութիւնը։ Մեր անձը, մեր ֆիզիքական, մտաւոր ու բարոյական ես-ը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի բարդ հիւսուածք, որի նիւթերը մեծ մասամբ փոխառուած են ընդհանուր ազգային շտեմարանից։ Իսկ այդ վերջինը ուրիշ բան չէ, բայց եթէ արդիւնք բոլոր նոյնազգի անհատների համերաշխ գործակցութեան։

Ազգային գիտակցութիւնը ծնում է սեր՝ դէպի ազգ-համայնքը. աւելի ճիշտ՝ ուժեղացնում է այդ սէրը։ Ն մ ա ն ո ւ թ ի ւ ն ը առհասարակ ծնում է հ ա մ ա կ ր ո ւ թ ի ւ ն։ Մտածելակերպի և զգալակերպի ընդհանրութեան (կամ նմանութեան) գիտակցումը ազգի բոլոր անդամների մէջ արտադրում է համակրութիւն դէպի ազգային ամբողջութիւնը։ Անհատը — հայ, լեհ, ռուս, ֆինն, մաջառ և լն — սիրում է իր ազգը, որովհետև ինքզինքը ճանաչում է, որպէս այդ ազգի մի մասնիկը, որովհետև գիտակցում է, որ իր անձնաւորութեամբ, բնոյթով, իմացականութեամբ հ ա ղ ո ր դ ա կ ի ց է ամբողջ ազգայի ն ա ն ձ ն ա ւ ո ր ո ւ թ ե ա ն, ազգային բնոյթին ու իմացականութեան։

Եւ ինչպէս որ ն մ ա ն ո ւ թ ի ւ ն ը ծնում է համակրութիւն ու սէր, այնպէս և տ ա ր բ ե ր ո ւ թ ի ւ ն ը ծնում է յաճախ հակակրութիւն ու անտարբերութիւն։ Մարդկային բնաւորութեան մէջ մի գիծ կայ, որ բացատրում է այդ ուշագրաւ երևոյթը։ Դ ա ի ն ե ր ց ի ա յ ի (inertie) ուժն է։ Նա սերտ կերպով կապւած է մի այլ երևոյթի հետ, որ անւանում են հոգեբանութեան մէջ մ ի զ օ ն է ի զ մ, ն ո ր ա տ ե ա ց ո ւ թ ի ւ ն կամ տարբերատեացութիւն։

Միջին մարդը ի ն ե ր տ է (յամառ, անշարժ) իր սովորութիւնների մէջ և ըմբռստ նորութիւնների ու նորմուծութիւնների հանդէպ („նոր“ և „տարբեր“—այստեղ նոյնիմաստ գաղափարներ են)։

Ամենից ուժեղ այդ երևոյթներն արտայայտւում են, բնականաբար, ազգի այն հատուածների ու դասակարգերի մէջ, որոնք չեն շփւում կամ քիչ են շփւում արտաքին աշխարհի հետ և ապրում են կղզեացած իրենց դարաւոր սովորութիւնների ու հասկացողութիւնների շրջանակներում։ Այդպէս են, օրինակ, գ ի ւ ղ ա ց ի ա կ ա ն դ ա ս ա կ ա ր գ ե ր ը։ Խիստ տարբեր են առհասարակ այդ տեսակէտից գ ա ւ ա ռ ա ց ի ն և ք ա ղ ա ք ա ց ի ն։ Ոչ արտաքին նեաճողական արշաւանքներն ու օտարի տիրապետութիւնը, ոչ էլ պատմական ուրիշ ձախորդ պատահարներ՝ երբէք և ոչ մի տեղ չեն կարողացել դիպչել այդ գաւառական խաւերին, եղծանել ու խեղաթիւրել նրանց ազգային ուրոյն բնոյթը։ Մինչդեռ ուրիշ դասակարգեր—վաճառականութիւնը, մտաւորականութեան մի մասը—շատ յաճախ են ցոյց տուել համակերպութեան և ձ ո ւ լ մ ա ն հակումներ։ Էլզասի գիւղացին հոգով-սրտով ֆրանսիացի է մնում, Լեհաստանի գիւղացին՝ լեհ, հայը՝ ընդհանրապէս հայ և այլն։ Ասում ենք ընդհանրապէս՝ որովհետև հայ գիւղացիութեան մասին խօսելիս՝ չենք կարող չը յիշել մի շարք տխուր բացառութիւններ։ Թէ Կովկասում, թէ Թիւրքիայում և թէ Իրանում կան ամբողջ գաւառներ, ուր այդ ըստ էութեան ինքնատ զանգւածներն անդամ ենթարկւել են ձուլարար հոսանքներին, փոխել են լեզուն, որդեգրել են վրացական, թաթարական, աջամական ու տաճկական բառ-բառներ, նրանց հետ և՝ բարք ու սովորութիւն։

Այնուամենայնիւ, ընդհանուր առմամբ՝ գաւառային ազգաբնակութիւնը մեզ մօտ ևս, շնորհիւ զուտ կրաւորական դիմադրութեան, շնորհիւ իր միզոնէիզմի, ազատ է մնացել օտարացման վարակումներից։

Նոյն երևոյթը—անդամ հեռաւոր Դ ի ա ս պ օ ր ա յ ի մէջ, հայոց հինաւուրց գաղութների մէջ։ Ուշագրաւ են այդ տեսակէտից մեր գաղութները Աւստրո-Ունգարիայում։ Մինչդեռ Լեմբերգի հայ ազդեցիկ վաճառականութիւնը, հետևելով իր դասակարգի կոսմոպոլիտ բնազդներին, վաղուց ի վեր լուծւել է իր լեզուով ու բարքերով տիրող ազգի, լեհութեան մէջ, պահպանելով միայն ազգային եկեղեցու խղճուկ ու խեղաթիւրւած մնացորդները, հեռու գաւառներում, Գալիցիայի, Բուկովինայի, Տրանսիլվանիայի մէջ—կուտի, Սամուշուվար և այլն—հայածագում, ցանցառ ազգաբնակութիւնները պահպանել են դարերի ընթացքում իրենց ազգային ժարգոնները, որոնցով խօսում են դեռ այսօր։ Կուտի փոքրիկ գիւղաքաղաքի մէջ հանդիպում ենք նոյնիսկ շատ հայախօս հրէաների, որոնք, անշուշտ, հարկադրւած են եղել սովորելու հայ բառ-բառը, իրենց շրջապատող հայ տարրի հետ հաղորդակցել կարենալու համար։

Գաւառացին ի ն ե ր տ է — մէկ։ Նա ընդհանրապէս ն ո ր ա տ ե ա ց է, միզոնէիստ—երկու։ Նա առհասարակ պինդ կպած է իր հնաւանդ, պապենական սովորութիւններին. և նա խորթ ու կասկածոտ աչքով է նայում այն ամենի վրայ, որ գալիս է որևէ կերպ խախտելու իր աւանդական սրբութիւնները։ Նա հրում է, ինչ որ տ ա ր բ ե ր է։ Նա ատում է յաճախ նոյնիսկ տարբեր զգեստը, տարազը, գոյնը... մանաւանդ երբ այդ վերջինները կրող ու ներմուծող է հանդիսանում ն ա ա ճ ո ղ տ ա ր բ ը։

Գիւղացիական այդ միզոնէիզմը, այդ յամառ, ինքնատ պահպանողականութիւնը, հարկաւ, միանգամայն ուրախալի երևոյթ չէ։ Նա երկայրի սուր է։ Նա մի կողմից, իրաւ է, հզօր, ամուր պատնէշ է կանգնում բոլոր ձուլարար, բռնակալական հոսանքների դէմ և չի թոյլ տալիս, որ ի դէմս իր՝ ծայրատի ու խեղաթիւրի ազգայնական ուրոյն բնոյթը։ Բայց նա միւս կողմից թումբ է կանգնում և այն բոլոր հոսանքների դէմ, որոնք բերում են դրսի աշխարհից կրթիչ, լուսատու ներմուծութիւններ, քաղաքակրթութեան կենդանարար ճառագայթներ, որ գալիս են փարատելու այդ լքւած, նահապետական զանգւածների մէջ թագաւորող աղջամուղջը։ Ինքնատիպութիւնը, այո, իր դրական կողմերն ունենալով հանդերձ, ձգտում է մոլեռանդ նախանձախնդրութեամբ պահպանել այն բ ա ց ա ս ա կ ա ն ա ր ժ է ք ն ե ր ի բեռը, որի մասին քիչ յետոյ կը խօսենք։

Մի ուրիշ „երկայրի սուր“։ Ազգութեան միւս զանգւածները կան, բաղկացած գլխաւորապէս վաճառականութիւնից ու մտաւորականութիւնից, որ մասամբ ձուլւելով հանդերձ դրացի ազգութիւնների հետ, հանդիսանում են միւս կողմից իրենց առողջ, անվթար տարրերով, որպէս ավանդարդ, ա ռ ա ջ ա պ ա հ ազգային պրոգրէսի (առաջխաղացութեան), ընդօրինակում ու մարսում են աւելի բարձր ազգերի ծանուցած գաղափարները և նրանց համեմատ ձգտում յեղաշրջել հարազատ ազգի խոպան, յետամնաց աշխարհայացքը։ Այդ զանգւածը էապէս ն ո ր ա ս ե ր է, նա ռ է ֆ օ ր մ ա տ օ ր է, ներկայացուցիչ վերանորոգչական հոսանքի՝ ը ն դ դ է մ ռ ո ւ տ ի ն ի, ընդդէմ բացասական արժէքների։

Կայ միւս խոշոր գործօնը, որ սիրել է տալիս ազգու-

թիւնը, որ կապում, ջերմացնում է ամեն մի անհատի իր ազգային մարմնի հետ։ Դա պատմութիւնն է։ Ազգը, ինչպէս տեսանք, էապէս ճակատագրի համայնք է, այսինքն միեւնոյն յոյզերն ու փոթորիկները պատմականօրէն ապրած մի համայնք։

Եւ ինչպէս որ առաջին շաղկապ-գործօնը դեր է խաղում առանձնապէս մշակ, գիւղացի դասակարգերի հոգեբանութեան մէջ, այնպէս և վերջինը — պատմական ճակատագրի ընդհանրութիւնն ու նրա գիտակցումը—խթանում է ազգի հասուն, մտաւորական խաւերը, գլխաւորապէս ժողովրդական ինտելիգենցիային *) արծարծելով նրա մէջ ճշմարիտ ազգային զգացում և գաղափարական ու անձնազոհ հայրենասիրութիւն։ Այդ պատմական ճակատագրի գիտակցութիւնը չի կարելի, ի հարկէ, փնտրել այն դասակարգերի, զանգուածների մէջ, որոնք գրել-կարդալ չը գիտեն և իրենց տնտեսական ու քաղաքական կացութեան շնորհիւ, հեռու են պահուել ընդհանրապէս կուլտուրայի, մասնաւորապէս ազգային կուլտուրայի ազդեցութիւնից ու բարիքներից։ Գիւղացիական զանգուածները, անգամ արեւմտեան մի շարք երկրներում, առհասարակ ծանօթ չեն իրենց պատմութեան։ Ո՞ւր մնաց կիսակիրթ, ուսումնազուրկ երկրների մէջ—թէկուզ հէնց մեզ մօտ, Անդրկովկասում, Թիւրքահայաստանում։

Ազգային պատմութիւնը, ինչպէս առհասարակ ամբողջ ազգայնական քաղաքակրթութիւնը—գրականութիւն, լեզու (մշակուած, գրական լեզու) և այլն—մնում է մեզ մօտ եւս սեփականութիւն ինտելիգենցիայի, այն էլ նրա համեմատաբար փոքրիկ հատուածի։ Բայց նա ձգտում է ամենուրեք լայնացնել իր ազդեցութեան սահմանները։ Ազգային կուլտուրայի բարիքները կամաց-կամաց և ամենուրեք դադարում են մի չնչին փոքրամասնութեան արտօնութիւնը լինելուց. նրանք հետզհետէ ծաւալւում են, ժողովրդականում։

Այդ հանգամանքին մեծապէս նպաստում է, ի հարկէ, ռամկավարութեան սկզբունքի տարածումը, նպաստում է ամենահզօրը բոլոր պրոպագանդիստներից — ժողովրդական դպրոցը... Նա, որ անդուլ ու անդադրում պիտի արծարծէ ամեն տեղ —նաև մեզ մօտ—սեփական պատմութեան ու գրականութեան սէրը և դրա հետ միասին ազգի, հայրենիքի սէրը— գիտակցական ու արգասաւոր սէրը — ժողովրդային լայն զանգուածների մէջ։

Ազգային քաղաքակրթութիւնը ձգտում է ամեն տեղ դառնալ համաժողովրդական սեփականութիւն։ Ժողովուրդը ձգտում է դառնալ և պիտի դառնայ՝ ազգ։ Այդպէս է ժամանակակից ռամկավարութեան առաջին մեծ նշանաբանը։ Այդպէս է համաշխարհային պատմութեան ձգտումը։

* * *

Գանք այժմ ազգային առանձնայատկութիւններին ու արժէքներին։

Որքա՜ն ճկուն, առաձգական հասկացողութիւններ։ Որպիսի այլազանութիւն ըմբռնումների ու գնահատումների— ազգի այլեայլ խաւերի մէջ։ Ազգայնական արժէքների որակման խնդրի շուրջը՝ առաջ են գալիս կուսակցութիւններ, հոսանքներ։ Ոմանք հռչակում են, իբրև միանգամայն սուրբ ու անձեռնմխելի՝ ազգային բոլոր առանձնայատկութիւնները և յանուն այդ սրբութեան ու անձեռնմխելիութեան՝ պատերազմ են յայտարարում բոլոր արտաքին ներմուծումների, փոխառումների, ռէֆորմների դէմ։

Ո՞ւմ չեն յայտնի այդ փտած, միջնադարեան մնացորդները։ Ամեն տեղ կան նրանք։ Բոլոր, անգամ քաղաքակիրթ, երկրների մէջ կայ բորբոսնած ռուտինը, պահպանողական հոսանքը, որ մոլեռանդ նախանձախնդրութեամբ պահպանել է ուզում ազգային բոլոր առանձնայատկութիւնները, յանուն գուրգուրած, փառաբանած մի կուռքի— ազգայնական ինքնուրոյնութեան։ Դրանք սովորաբար իշխող, արտօնատէր դասակարգերն են, որ ամեն տեղ գարշում են նորմուծութիւններից, իրենց դարաւոր տիրապետութեանը սպառնացող ռէֆորմներից։

Այդպէս են իւնկերները Գերմանիայում, պրոֆէսիոնալ „պատրիօտները" Ֆրանսիայում, ջինգօները Անգլիայում, „իսկական ռուս մարդիկ" Ռուսաստանում։ Նոյն հոգեբանութիւնն է տիրում—աւելի ուժեղ ու գունաւորուած—Թիւրք ու այլ իսլամական իշխող տարրերի մեծամասնութեան մէջ։ Վերջապէս, մեր, հայկական միջավայրում եւս, գոյութիւն ունի վաղուց ի վեր այդ հոսանքը— ի դէմս մեր մարտնչող խաւարամտութեան... „Մեղու Հայաստանի"-ից մինչև „Նոր-Դար", „Հովիւ" ու „Լումա"—դա նոյն աւանդապաշտ, պահպանողական հոգեբանութիւնն է, որ պայքարում է նորամուտ գաղափարների դէմ և փառաբանում „ազգային ինքնուրոյնութեան" աւետարանը։ Իսկ այդ ինքնուրոյնութիւնը հանդէս է գալիս նրանց քարոզների մէջ միանգամայն ինքնատիպ ձևակերպութեամբ, որ յատուկ է պահպանողական մտայնութեան։

Իւնկերի համար՝ այդ „ազգային ուրոյնութիւնը" պրուսական ոստիկանական ռէժիմն է, իսկական ռուսների, Մարկօվների ու Պուրիշկեվիչների համար՝ ինքնակալութիւնը հիւսուած ուղղափառութեան դօգմի հետ։ Թիւրքական աւանդամոլների համար՝ „սրբազնագոյն Շէրիաթը", վերջապէս, հայ կղերականների համար՝ դա „Հայաստանեայց առաքելական եկեղեցին է, ամենաամուր պատուանդանը հայ ազգի գոյութեան և գերագոյն գրաւականը նրա բարգաւաճման"։

Հայկական ծանօթ „ազգասիրութիւնը" նոյնանում է այդ ռուտինին, այդ յետախաղաց հոսանքին։ Նա սնւում է նոյն աղբիւրներից, մեկնում է նոյն չուկէտներից, ինչպէս բոլոր միւս երկրների պահպանողական հոսանքները։ Նա հրահանգում է՝ պաշտել աւանդը, սովորութիւնը, պաշտել նախնիքներից կտակուած բոլոր հաւաքական ստացուածքները։ Եւ հպարտ են բոլոր այդ միջնադարեան տարրերը իրենց պաշտամունքի առարկաներով. իւնկերը՝ իր հնաւանդ հօհէնցօլլերնեան բռունցքի սիստեմով, „իսկական ռուսը"՝ կնուտի ու փտութեան ռէժիմով, համիսլամական պատրիօտը՝ իր Շէրիաթով ու խալիֆական մեծութեան հմայքով, հայ կղերականը՝ իր Հայաստանեայց եկեղեցիով, նրա բոլոր կանոններով, դօգմերով, սրբերով ու քելեխներով։ Նոյն հոգեբանութիւնը—ամենուրեք։ Կրկնում ենք, նա շեշտւում է գլխաւորապէս իշխող, կեղեքիչ դասակարգերի և նրանց „կրթեալ" փաստաբանների աշխարհում։ Գերմանական տաղանդաւոր բանաստեղծը, Հայնրիխ Հայնէ, վաղուց իր թունոտ հեգնանքով խարանել է այդ ինքնատիպ ազգասիրական մտավիճակը, հետևեալ ոտանաւորի մէջ, որ վերաբերում է իր ժամանակի գերմանացի „ազգասէրներին", աւանդապաշտներին.

. . . .

Ich bin als ein Esel geboren.

Ich bin ein Esel und will getreu
Wie meine Väter, die alten,
An der alten lieben Eselei,
Am Eselthume halten.

Էշ եմ ծնուել ես,
Եւ կուզէի իմ նախնիների պէս
Մնալ յաւէտ հաւատարիմ
Հին նուիրական էշութեան:

Ազգային արժէքների սխալ ըմբռնում։ Խանդավառութիւն կեղծ, բացասական արժէքների համար։ Չափազանցութիւն ազգային ուրոյն „հմայքի" և կարծեցեալ արժանաւորութիւնների. կեղծ, ուռուցիկ հպարտութիւն, աւելի ճիշտ՝ գոռոզութիւն—ահա այդ համատարած, ռուտինային հոսանքի էութիւնը։ Չակերտաւոր ազգասէրը կամ շօվէն-նացիօնալիստը տրամադիր է միշտ չափազանցնել իր հայրենի առաքինութիւնները, իր ազգի բոլոր, նոյնիսկ չ'եղած ու բացասական արժէքները։

*) Պէտք է զանազանել այն՝ բուրժուազական ինտելիգենցիայից, մտաւորականութիւնից, որ յարում է իշխող դասակարգերի աշխարհահայեացքին:

Արժէքների գնահատութեան եղանակից բղխում է տրամաբանօրէն և ազգային համապատասխան քաղաքականութիւն։ Բնականաբար, ուրեմն, նացիոնալիստ հոսանքն ու կուսակցութիւնը, որ համարում է իր ազգը, իր երկիրը մարդկային բոլոր առաքինութիւնների օճախ, մարմնացում—բնականաբար, նա բոլոր ուժով պիտի դիմադրէ օտար, „խորթ“ ազդեցութիւնների հոսանքին։ Մոքի և իրականութեան բոլոր աշխարհներում նա մոլեռանդութեամբ հաստատում է իր ազգային կասկածելի արժէքները և յետ մղում ուրիշները, որպէս անպայման վտանգաւոր, խեղաթիւրող ու սրբապղծող։

Ցիշենք, օրինակ, սլավօֆիլների և զապադնիկների հռչակաւոր, պատմական կռիւը՝ Ռուսաստանում։ Մի կռիւ, որ դեռ շարունակւում է, փոքր ինչ ձևափոխուած։ Սլավօֆիլները կամ սլավոմոլները նոյն ռուսոֆիլ, նոյն փտած աւանդութեան ներկայացուցիչներն են, սիրահարուած իրենց ցեղական հանճարի վրայ, խանդավառ երկրպագու զուտ ռուսական կուլտուրայի, առանձնայատկութիւնների, ցեղաբնոյթի։ Նրանց համար նուիրական է զուտ ռուսական, սլավօնական այդ ցեղաբնոյթը իր բոլոր, նոյնիսկ բացասական բարեմասնութիւններով... Մուժիկի անյատակ տգիտութիւն ու ստրկամտութիւն, սանձարձակ, կամայական պաշտօնէութիւն (ցարական բիւրօկրատիա), օրթօդօքս եկեղեցու սրբադրծած բիւրաւոր նախապաշարումներ ու անապաշտամունքներ... Ահա յանուն այդ տեսակ առանձնայատուկ գոյութեան էր, որ նացիոնալիստ սլավօֆիլները խաչակրաց արշաւանք քարոզեցին եւրոպական ամեն տեսակ ազդեցութիւնների ու նորմուծութիւնների դէմ, պահանջելով, որ հայրենիքն ընթանայ իր ուրոյն զարգացման ճանապարհով։ Ասիական տիպի միահեծան բռնակալութիւնը իր բոլոր յարակից հաստատութիւններով՝ թանկ ու նուիրական էր ռուս խաւարամիտների համար, քանի որ նրանք համապատասխանում էին „ազգային ուրոյն բնոյթին“։ Ռուսաստանը նրանց աչքում բնաւ ստոր չի կանգնած արևմտեան երկրներից, իր քաղաքական-հասարակական կազմով ու կուլտուրական ընդհանուր կերպարանքով. ընդհակառակը, նրանք հակուած են որոշ տեսակէտով իրենց հայրենիքը աւելի ևս բարձր դասել *)։

Սլավօֆիլների դիմաց՝ կային զապադնիկները կամ „արևմտականները“, որոնց կարելի է համարել այժմեան յեղափոխական Ռուսաստանի հայրեր։ Նրանք ներկայացնում էին հակառակ ուղղութիւնը։ Նրանք ասում էին, որ Ռուսաստանը անհրաժեշտաբար պիտի հետևէ Եւրոպային, պիտի օգուտ բարձր ազդերի դարաւոր առաջադիմութեան փորձերից, արդասիքներից, պիտի անէ անհրաժեշտ փոխառութիւններ, պիտի յեղաշրջէ ու վերանորոգէ իր քաղաքական, հասարակական ու տնտեսական հաստատութիւնները՝ արևմտեան կաղապարներով։ Պետրոս Մեծը այդ ուղղութեան առաջին հզօր ռահվիրան էր և իրաւամբ նրան կոչում են Ռուսաստանի առաջին յեղափոխական։ Զապադնիկները համոզուած էին, որ այդ տեսակ փոխառումներով ու ռէֆօրմներով միայն՝ Ռուսաստանը կարող է առաջադիմել ու բարգաւաճել և որ դրանից բնաւ չէր տուժի ռուս ազգի ինքնուրոյնութիւնը։

Ցաղթանակը — զուտ նիւթական, բռնի ուժի յաղթանակը—այսօր խաւարամիտ ու աւանդապաշտ նացիոնալիզմի կողմն է, բայց նա յարատև չէ... Ցեղափոխութիւնը խորտակել է արդէն նրա մի քանի խարիսխները։

Թիւրքիայում—համանման պատմութիւն։ Շերիաթապաշտ մեծամասնութիւնը ռուտինի կողմն է, յեղափոխական փոքրամասնութիւնը՝ արևմտեան գաղափարների ու ռէֆօրմների։ Ցաղթանակը—թէ ֆիզիքական և թէ բարոյական—առայժմ այդ ազատարար փոքրամասնութեան ձեռքն է։

Նոյնը—Պարսկաստանում, նոյնը—ամեն տեղ։

Կեղծ, միջնադարեան, բացասական „արժէքների“ ջատագովումը ամեն տեղ արտադրել է այդպիսի յոռի, պահպանողական քաղաքականութիւն.—Նաև այն ազգերի մէջ, որոնք զրկուած են քաղաքական անկախութիւնից։ Կեղծ, անկայուն արժէքների անունով ամեն տեղ կռիւ են յայտարարել ընդդէմ նորագոյն գաղափարների, եւրոպականութեան ու ճշմարիտ քաղաքակրթութեան։

Նոյն անկայուն, հնադարեան արժէքների անունով՝ հայ մարտնչող խաւարամտութիւնը պարզել է իր դրօշակը 60-ական թուերից ի վեր, կուել է օրհասական կատաղութեամբ՝ անդամ այն համեստ, բուրժուազական լիբերալիզմի դէմ, որի ռահվիրան էր Գրիգոր Արծրունին և որ քարոզում էր՝ փոքր ինչ թարմացնել, վերանորոգել „Հայաստանեայց առաքելական եկեղեցին“։ Ինչպէս ռուսական սլավօֆիլների, այնպէս և հայ աւանդամոլների աչքում՝ ամեն ինչ կատարեալ էր ազգային գերագոյն հաստատութիւնների մէջ—և ռէֆօրմը, նորմուծութիւնները հանդիսանում էին, որպէս դաւաճանութիւն, հեթանոսական սրբապղծութիւն։ Կռիւը տակաւին շարունակւում է։ Դեռ ստար է հայ միջնադարեանների բանակը Անդրկովկասում ու Թիւրքիայում և դեռ կենդանի է „ազգ-եկեղեցի“ նշանաբանը... „ազգի“ նոյնացումը „եկեղեցու“ հետ... Նոյնիսկ առաջինի ստորադրումը՝ վերջինին։ Եկեղեցին — ոչ միայն ազգի հզօրագոյն սիւնը, այլ և նրա փրկութեան միակ խարիսխը... անդամ այսօր, 20-րդ դարում։ Կռիւը շարունակւում է նոյնքան աւելի կատաղութեամբ, որքան աւելի աճում է հետզհետէ հայ „արևմտականների“ բանակը, հայ աշխարհիկ, ռամկավարական կուսակցութիւնը, որքան աւելի նա իր ձեռքն է առնում ազգային հաստատութիւնները և ժողովրդական ճակատագրի ղեկավարութիւնը։

Ազգային առողջ փիլիսոփայութիւնը գիտէ զանազանել կեղծը հարազատից, արծիծը ոսկուց։ Անտարակոյս, հին, աւանդական ստացուածքների մէջ կան, թանկագին, նուիրական գանձեր, որոնց մասին խօսել ենք արդէն—լեզու, գրականութիւն, արուեստ և այլն — որոնց համար ընդունակ են ոգևորուելու ազգի բոլոր գիտակից անդամները, պահպանողականից մինչև սոցիալիստը *)։ Թէև—նկատենք—այդտեղ ևս անդունդ կայ պահպանողականի և առաջադիմականի միջև. մեկը ոգևորւում է, համարելով իր լեզուն բոլորից բարձր, ամենից հնչուն ու ներդաշնակ, ամենից մշակուած ու կատարեալ. և այդ իսկ տրամաբանութեամբ ըմբոստանում է փոփոխութիւնների, նորմուծումների դէմ։ Միւսը սիրելով հանդերձ իր մայրենի լեզուն, պաշտպանելով հանդերձ նրա

*) „Ազգային գերազանցութեան“ այդ պատրանքը մի յայտնի չափով վարակել էր նաև 60-ական թուերի մի շարք առաջադէմ ռուս մարդիկների—Հերցեն, Տկաչեով եւայլն—որոնք հիմնուած ռուսական „միր“-ի, համայնքի որոշ առանձնայատկութիւնների վրայ, պնդում էին, որ Ռուսաստանը աւելի արագ ու դիւրութեամբ պիտի հասնի կոմունիզմի յաղթանակին, քան արեւմտեան երկիրները։ (Տես „Դրօշակի“ ներկայ համարի առաջնորդողը)։

գոյութեան սրբազան իրաւունքները, գիտակցում է միաժամանակ նրա թերութիւնները և ձգտում է մշակել, կատարելագործել, ի հարկին փոխառութիւններ անելով ուրիշ լեզուներից։ Գերմաներէն լեզուն անվերջ օգտւում, ճոխանում է ֆրանսերէն բառերով—չը նայեած երկու ազգերի հակամարտութեան. ռուսերէնը անդադար փոխառութիւններ է անում ֆրանսերէնից ու գերմաներէնից և սակայն ոչ գերմանական, ոչ էլ ռուսական լեզուները դրանով չեն վնասում իրենց լեզուի ինքնուրոյնութեան։ Չի տուժում ազգային ինքնուրոյնութիւնը և ուրիշ տեսակ փոխառութիւններից ու ազդեցութիւններից—նիւթական կուլտուրայի մէջ, գրականութեան, արուեստի մէջ և այլն։ Բոլոր ազգերը սովորում են իրարից, ընդօրինակում են փոխադարձաբար։ Եւրոպան ընդօրինակել է Հռոմին, Հռոմը՝ Յունաստանին, Յունաստանը՝ Արևելքին։ Ֆրանսիական, գերմանական գրականութիւնն ու արուեստը որքա՞ն օգտւել են վերածնուող Իտալիայի փառապանծ արուեստից, գրականութիւնից։ Չը կայ բայարձակ իմաստով ի ն ք ն ո ւ ր ո յ ն ազգ. ազգային ուրոյնութիւնը յարաբերական է, ինչպէս անհատինը, ինչպէս ամեն բան այս աշխարհում։

Փոխառելով և մարսելով ուրիշ ազգերի առաջադիմութեան արգասիքները, կաղապարելով հայրենի երկրի կուլտուրական հաստատութիւնները ըստ օտարի՝ իւրաքանչիւր ազգ, այնուամենայնիւ շարունակում է պահպանել իր ինքնութիւնը։ Ռուսը, հայը, թիւրքը, ճապօնացին, պարսիկը, ֆինը—բոլորն էլ ենթարկւում են Արևմուտքի հզոր ու տիրական ազդեցութիւններին, բոլորն էլ որոշ չափով ընդօրինակում, որդեգրում են արևմտեան գաղափարները, իդէալները, հաստատութիւնները. և սակայն նրանք բոլորը մնում են և պիտի մնան միշտ խորապէս տարբեր, ինքնատիպ, իրենց ուրոյն, ազգայնական առանձնայատկութիւններով։

Նմանողութեան, ընդօրինակման այդ օրէնքի մէջ (la loi de l'imitation) կայ մի խոշոր հոգեբանական իրողութիւն, որ բացատրում է առեղծուածը։ Ոչ մի ազգ ն ո յ ն ո ւ թ ե ա մ ք չ ի ի ւ ր ա ց ն ո ւ մ օտարներից փոխառած գաղափարները. ամեն մէկը իւրացնում, մարսում է իր ձևով, համաձայն իր ինքնատիպ ոգուն ու բնոյթին. ամեն մէկը ձուլում է որոշ, համաշխարհային մի գաղափար, մի իդէալ՝ իր ներքին առանձնայատուկ քուրայի մէջ և հաղորդում է նրան իր ուրոյն դրոշմը, իրականացնում է այն կեանքի մէջ՝ ուրոյն եղանակով։ Առնենք թէկուզ ռամկավարութեան ու Սոցիալիզմի գաղափարները։ Ո՞րպիսի անվերջ այլազանութիւն՝ կիրառումների մէջ։ Որքա՞ն տարբեր են „դասակարգային կռուի" մեթոդները տարբեր ազգային միջավայրերում։ Մի տեղ շեշտւում է քաղաքական, պարլամենտական կռուի մեթոդը, մի այլ տեղ՝ տնտեսականը, մի տեղ զարգանում է խաղաղ ու հոյակապ արէգ-իւնիոնիզմը, մի այլ տեղ՝ յեղափոխական սինդիկալիզմը. մի տեղ սոցիալիզմի յարաճուն ալիքը գրո՞հ է տալիս դէպի ազգային կենտրոնական պարլամենտը, ստուարացնելով այնտեղ իր մարտական ներկայացուցչութիւնը, մի այլ տեղ՝ նա նուաճում է առաւելապէս գաւառական հաստատութիւնները, քաղաքային խորհուրդները, մի տեղ բարգաւաճում է չափաւոր, պատեհապաշտ տակտիկը, մի այլ տեղ՝ անհաշտ-յեղափոխականը և այլն և այլն։

Այդպէս է իւրաքանչիւր մեծ, տիեզերական գաղափարի ճակատագիրը։ Ամբողջ ժամանակակից ռամկավարական հաւատամքը, Ատլանտեան եղերքներից մինչև եւրասիական ծովը, Տիբրոսից մինչև Բալկաններն ու Բոսֆորը, մինչև հեռաւոր Իրանը՝ սնւում է նոյն հզօր արմատից, նոյն չքնաղ ու յաւերժական աղբիւրից, որ դուրս ժայթքեց 1789 անմոռանալի թուականին Դանտոնի ու Ռոբեսպիէռի հայրենիքում։ Ամենուրեք նոյն „Մարդկային Իրաւունքների" կիրառումն է, նոյն հիմնական գաղափարի պատուաստումը և ամենուրեք նա ձուլւում ու ձևափոխւում է ազգայնական քուրաներում, յարմարւում է իւրաքանչիւր համայնքի ոգուն, տեմպերամենտին, խառնուածքին։

Ոչ, ազգերը չեն կորցնում իրենց ինքնատիպ բնոյթը, ընդօրինակելով ու ազդւելով։ Չի կորցրել իր ինքնութիւնը նոյնիսկ մեր փոքրիկ հայկեան ցեղը, որ դարեր շարունակ տարուբերւել է օտար, նեաճողական յորձանքների մէջ, անդադար ենթարկւելով օտար քաղաքակրթութիւնների, լեզուների, գրականութիւնների բռնաւոր կամ կամաւոր ազդեցութեան։ Անշարժ ու յետ են մնայել այն ազգերն ու ցեղերը, որոնք մերժել են ընդօրինակումն ու արտաքին ազդեցութիւնները և փակւել ու յամառել են ուտինի, աւանդապաշտ սովորութիւնների մէջ։ Ապացոյց՝ Չինաստանը, Թիւրքիան, իսլամական ուրիշ երկրներ։

Որքան արագ կընթանայ ընդօրինակման (ոչ, ի հարկէ, անգիտակից կապկութեան) պրոցէսը, որքան շուտով ու դիւրութեամբ յետամնաց ազգութիւնները կը թօթափեն „հնութեան փոշին" ու կ'ենթարկւին նոր, արևմտեան գաղափարների ազդեցութեան—այնքան շուտով կը բարգաւաճին նրանք և այնքան պատւով ու համարձակ տեղ կը բռնեն տիեզերական արժէքների մրցարանում։

Ազգային բոլոր առանձնայատկութիւնները ինքնին դրական արժէքներ չեն։ Դրական են միմիայն նրանք, որ նպաստում են ազգային համայնքների աստիճանական վերելքին, աստիճանական առաջխաղացութեան՝ դէպի ժամանակակից ռամկավարութեան Իդէալը, դէպի ազատութեան և ընդհանուր, զանգւածային բարօրութեան յաղթանակը։

Պէտք է ուժ տալ այն հաւաքական առանձնայատկութիւններին ու ստացւածքներին, որոնք տեւականօրէն արժէքաւոր են և արգասաբեր՝ ազգային ու համամարդկային քաղաքակրթութեան համար։ Պէտք է զարգացնել ճշմարիտ, կայուն արժէքները։

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ԵՒ
ՏԵՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ

(Մեր աշխարհահայեացքի հիմքերը)

I

„Բոլոր հասարակութիւնների մէջ՝ դեռ անյիշատակ ժամանակներից ի վեր՝ մենք դիտում ենք դասակարգային բաժանումներ—իշխողներ եւ հպատակներ, կեղեքողներ եւ կեղեքւողներ։

„Հասարակութիւնը ամեն տեղ վերածւած է երկու անհաւասար հատւածների. — շահագործող փոքրամասնութիւնը, իր ձեռքն առած համայնքի, ցեղի հասարակական եւ քաղաքական կեանքի ղեկը, ստեղծում է օրէնքներ եւ իրաւակարգեր, որոնց միջոցով խլում է աշխատաւորներից մեծամասնութեան ձեռքից նրա արտադրած բարիքները եւ դարձնում նոր զէնք՝ նոյն աշխատաւորներին աւելի եւ աւելի հպատակեցնելու, կեղեքելու համար"։

Այսպէս է սկսում Հ. Յ. Դաշնակցութեան Ծրագիրը։

Եւ այդ ծանուցումը պարապ, մտածին մի հաւատամք չէ, այլ պատմական անժխտելի մի ճշմարտութիւն, իրողութիւնների մի անխուսափելի եզրակացութիւն, ընդհանրացում։

Տեսական միտքը — նա, որ գիտէ կանգնած մնալ իր կոչման բարձրութեան վրայ, ազատ մնալ դասակարգային, կրօնական և այլ տեսակ նախապաշարումներից, ականջ դնել լոկ պատմական էւոլիւցիայի ձայնին, ղեկավարւել ամենուրեք օբ'եկտիվ, առարկայական ճշմարտութեան պատուիրաններով—տեսական միտքը չի հնարում այս կամ այն հասարակագիտական վարդապետութիւնը, այլ նա միայն պաղ, անխռով արձանագրում է փաստերն ու երևոյթները, զատում է

պատմութեան հսկայական պրոցէսի մէջ գլխաւորը երկրորդականից, էականը պատահականից և այդպէս արձանագրելով ու զատելով, նա միաժամանակ եզրակացնում է, ընդհանրացնում։

Վերլուծումի և ընդհանրացումի այդ գործողութիւնն է, որ տալիս է այս կամ այն գիտական, փիլիսոփայական վարդապետութիւնը։ Ընդհանրացումի կամ համադրումի այդ մեթոդով է, որ հին ու նոր ընկերվարական մեծ դէմքերը — Բաբեօֆ և Բլանկի, Կարլ Մարքս և Պրուդոն, Չերնիշեվսկի և Լավրով, Էնգելս և Կաուցկի, Բէբէլ և Ժորէս, Պրեսսանսէ և Անատոլ Ֆրանս — երկարատև վարանումներից ու խղճամիտ ուսումնասիրութիւնից յետոյ՝ յանգել են այն ամուր, անխորտակելի համոզումին, որ ձևակերպւում է սոցիալիզմի դաւանանքով, ընկերավարական վարդապետութեամբ։

Ոչ. „դասակարգային կռիւ“ ուրւականը չի յղացել թեթևամիտ ու տենդենցիոզ (դիտումնաւոր) հրապարակախօսների կողմից՝ բուրժուաներին, աշխարհի մեծերին սարսափեցնելու նպատակով։ Նա արձանագրել է, իբրև փաստ, իբրև ցայտուն մի իրողութիւն, որ կարմիր ժապաւէնով անցնում է մարդկային պատմութեան մէկ ծայրից մինչև միւսը, հետզհետէ սաստկանալով ու արիւնելով։

Ո՞ւր էր՝ թէ նա լինէր իրօք մի ցնորք, բանգագուշանք...

Ո՞ւր էր՝ թէ տիրէր գէթ քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ այն „նախասահմանեալ ներդաշնակութիւնը“ (*harmonie préétablie*), որ շեշտում է փիլիսոփայ Լայբնից ամբողջ տիեզերքի վերաբերմամբ և որի վրայ ծանրանում են և տնտեսագիտութեան յայտնի սիւներ 18-րդ դարի վերջերում և 19-րդ-ի սկզբում։ Ո՞ւր էր՝ թէ չը լինէր դասակարգային հակամարտութեան մղձաւանջը, որ այնքան յաճախ արտադրել է ազգային, կրօնական ու այլ տեսակ ժողովրդական հակամարտութիւններ ու մրցումներ... Մարդկութիւնը, որ այնքա՞ն յօշոտւել է նախապատմութեան անիշխանական ժամանակներում, ներքին արիւնոտ բաղխումներով. գէթ յետոյ, գէթ պատմական, քաղաքակրթական շրջանի մէջ զերծ կը լիներ իրարաջնջման այդ սարսափելի պատուհասից և բովանդակ մարդկային ցեղի ուշադրութիւնը, բոլոր բանական էակների միահամուռ, ներդաշնակ ճիգերը կ'ուղղուէին այն ժամանակ ընդհանուր ու ահաւոր թշնամու—բնութեան դէմ...

Այդպէս չէ, սակայն։ Եւ անգամ այսօր, քաղաքակրթութեան պանծալի նուաճումների շրջանում, 20 դար այլասիրական, եղբայրսիրական քարոզներից յետոյ, 20 դար մարդկային գթասրտութեան հեղեղներից ու ռամկավարական հաւասարացման պարբերական փորձերից յետոյ՝ մենք դեռ տեսնում ենք դասակարգային արհաւրալի բաղխումները միևնոյն երկրի, միևնոյն արիւնակից ազգութեան շրջանակներում, և երկու ահեղ հակոտնեաներ—շահագործող փոքրամասնութիւն և շահագործւող աշխատաւոր մեծամասնութիւն—կանգնած են իրարու հանդէպ, լորդ Բիկոնսֆիլդի արտայայտութեամբ, որպէս երկու թշնամի ցեղեր, պատրաստ գրոհ տալու իրարու վրայ և արեան նախճիրներ սարքելու...

Այդպէս է քաղաքակիրթ իրականութիւնը. այդպէս դառնում են հետզհետէ և ոչ-քաղաքակիրթ, յետամնաց իրականութիւնները։

Մենք չենք, ուրեմն, որ դիտամբ ուզում ենք այլանդակել պատմութեան պրոցէսը „բաղխումների ու նախճիրների“ զառանցանքներով.—այլանդակութիւնը պատմութեան խորունկ արգանդի մէջ է։ Մենք մատնանշում ենք միայն և փորձում լուսաբանել նրա ընթացքն ու հեռաւոր, անխուսափելի եզրակացութիւնը։

Այլանդակութի՞ւն, — քա՜ւ լիցի. . . „Կռիւը ծնող է ամեն բանի“—ճիշտ է ասում հին յունական իմաստութիւնը։ Կռիւը, անգամ միևնոյն ազգութեան ծոցում, դասակարգերի, շահերի, իրաւունքների կռիւը — մերթ խուլ ու թաքուն, մերթ բացարձակ ու մոլեգնոտ—հանդիսանում է ոչ թէ աղէտ ու անէծք, այլ միանգամայն անհրաժեշտ և դրական մի գործօն, մի զօրաւոր խթան հասարակական առաջխաղացութեան, որ մղում է ժողովուրդներին—դասակարգերի անդադրում իրարայաջորդման, յեղափոխական անդադրում վերիվայրումների ճանապարհով — դէպի վերջնական Իդէալը, դէպի բարձրագոյն, զուտ մարդկային համայնակենցաղը, ուր այլ ևս չը պէտք է լինին դասակարգեր ու առանձնաշնորհումներ, ուր դարվինեան գոյամարտը (*Daseinskampf*) պիտի կորցնէ իր բնաջնջող, դաժան բնոյթը, և պիտի վերածւի խաղաղ մտաւորկուլտուրական մրցակցութեան, ուր, վերջապէս, պիտի իրագործւի „մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւնը, իտեղի այսօրւայ կտրատուած, բաժան-բաժան և հակամարտ աշխարհի“ (Ծրագիր Հ. Յ. Դ., եր. 14)։

Համաշխարհային պատմութեան մէջ, արդարև, դասակարգային կռիւները առաջնակարգ և առաջատար գործօններից մէկն են։ Ոչ միակը, ինչպէս հուչակում էր՝ 1847 թւի Մարքս-Էնգելսեան Մանիֆեստը, փոքր ինչ նեղցնելով ու այլակերպելով պատմական իրականութիւնը։ Կան, եղել են տիեզերական էւոլիւցիայի մեծ հոսանքում՝ ուրիշ կարգի բաղխումներ, կան ազգային կռիւները, որ չեն վերածւում ամեն տեղ ու ամեն ժամանակ դասակարգային, տնտեսական մտահոգութիւնների ու մրցումների (օր. երբեմն ստրուկ, հպատակ երկրների մէջ, Բալկաններում, Իտալիայում, Հայաստանում, ազգային-ազատագրական շարժումների միջոցին). կան կրօնական, փիլիսոփայական և գիտական մրցումները, որ ահագին տեղ են բռնում քաղաքակրթութեան զարգացման մէջ և որ սակայն չեն կարող ամենքն էլ բացատրւել նիւթապաշտական մղումներով, տնտեսական, դասակարգային մրցումներով։

Տնտեսական գործօնը միակը չէ, բայց մէկն է ամենազօրաւոր գործօններից. նրա ազդեցութիւնը, որ շատ թոյլ է համեմատաբար նախապատմական ժամանակներում ու պատմութեան առաջին դարերում, գնալով միշտ աւելի ու աւելի ուժեղանում է և նորագոյն պատմութեան մէջ՝ դառնում է գրեթէ տիրական՝ բուն արևմտեան քաղաքակրթութեան հորիզոններում։

Դասակարգերի կռիւը *) բոլոր ազգերի պատմու-

*) Հասարակական մեծ դասակարգերն են՝ վարիցսկած՝ ոչ փականազուրկ աշխատաւորութիւն (դաշտային կամ քաղաքային), մանր ու խոշոր հողատեր

թեան մէջ տիրապետող իրողութիւններից մինն է, և բաւական է աչք ածել հին յոյների, հռոմայեցիների, եւրոպական բոլոր ազգերի, միջնադարեան ու նորդարեան բոլոր շրջանների վրայ, բաւական է փոքր ինչ խորասուզուել իւրաքանչիւր երկրի խոշոր անցքերի ուսումնասիրութեան մէջ, տեսնելու համար, թէ որքան ծանրակշիռ տեղ է բռնում այս կամ այն համայնքի դասակարգերի շերտաւորումը, նրանց շահերի հակամարտութիւնն ու բաղխումները՝ երկրի ընդհանուր ճակատագրի զարգացման մէջ։ Ցաճախ նրանք քօղարկուած են, դիմակաւորուած ուրիշ կարգի գաղափարներով ու դրօշակներով. երբեմն ազգային ու կրօնական դիմակի տակ այնպէս են վարագուրում ու խաւարում շահախնդիր դասակարգերի ձգտումները, որ ուսումնասիրող ընկերաբանը դժուարանում է պարզապէս հաշիւ տալ իրեն՝ կատարուող անցքերի իսկական խմաստի վերաբերմամբ։ Ցամենայն դէպս, „դասակարգային կռուի“ փաստը, որի առաջին մերկացնողն են ֆրանսիական հռչակաւոր պատմաբանները — Գիզո, Տիերրի, Մինիէ — որ ապա ներբողուեց բուն սոցիալիստ ռահվիրաների կողմից, դարձեալ Ֆրանսիայում (Բաբեօֆ, Բլանկի, Լուի Բլան և այլն), որ վերջապէս, ստացաւ յետագայում իր տեսական ձևակերպումը Կարլ Մարքսի գրուածքների մէջ, „դասակարգային կռուի“ փաստը, կամ ինչպէս ասում են՝ „թէօրիան“, հանդիսանում է այսօր մի չափազանց օգտակար, արգասաւոր մեթոդ իւրաքանչիւր ուսումնասիրողի, ընկերաբանի համար, որ կուզէ հետազօտել պատմական որևէ շրջան, կամ որևէ խոշոր անցք, ծանրակշիռ մի փոփոխութիւն այս կամ այն երկրի կեանքում։

***

Ինչպէ՞ս առաջացան երկրագնդի վրայ, մարդկային համայնքների ծոցում՝ այդ դասակարգային բաղխումները։ Արդեօք նրանք յատուկ են առհասարակ մարդկային գոյութեանը, որպէս ֆատալ, ճակատագրական մի պատուհաս, թէ՞ սկսել են երբևիցէ, որևէ տեղ։

Պատմական ու հասարակագիտական ուսումնասիրութիւնները հաստատում են վերջին ենթադրութիւնը։ Եղել է ահագին ժամանակաշրջան — հազարաւոր, գուցէ միլիօնաւոր տարիներ — երբ մարդկային ցեղերը ապրել են համայնական ռէժիմի տակ, երբ ամեն մի համայնքի ծոցում, ամեն մի կտոր հողի վրայ, ընդհանուրի հաւասարապէս սեփականութիւն են եղել՝ հողը, աշխատանքի միջոցները և արդիւնքները։ Մի ռէժիմ, որի օրով խօսք չէր կարող լինել դասակարգային առանձնաշնորհումի ու կեղեքումի մասին։ Այդպէս է եղել գենսական կամ տոհմային շրջանում, որի մասին խօսել ենք մի ուրիշ առթիւ *), նոյն այս էջերում։ Այդպէս են վկայում իրենց փաստացի գրուածքներով հռչակաւոր հասարակագէտներ — Սումներ Մայն, Լավըլէյ, Մաքսիմ Կովալեվսկի և ուրիշներ։ Եւ այդ համայնական դրութիւնը որոշ, էական իր գծերով շարունակուել է շատ տեղերում, նոյնիսկ գենսական կարգերի քայքայումից ու նահապետական գերդաստանների առաջանալուց յետոյ։

Այսօր իշխող, առանձնաշնորհեալ դասակարգերի իդէօլոգ-փաստաբանները սոցիալիզմի, կոմմունիզմի **) դէմ արշաւելով, սովորաբար պնդում են, որ նրանք ուտոպիա են, չ՝եղած ու չը լինելիք մի երազանք, որ համայնական սեփականութիւնը անհնարին է։

Սակայն, քանի՞ տեսակ „կոմմունիստական“, համայնատիրական սիստեմներ ենք տեսնում պատմութեան ընթացքում։ Դեռ չը խօսելով հնագոյն, նախապատմական սիստեմների մասին — քանի՞սը կան արդէն նոյնիսկ Եւրոպայում, հին ու միջին դարերի մէջ։ Յիշենք թէկուզ նախնի քրիստոնէական կոմմունիզմը։ Պէտք է իմանալ, ընթերցող, որ քրիստոնէութեան նախնական սպասաւորները մեր օրերի կղերի պէս չէին։ Առաջին քրիստոնեայ համայնքների մէջ չէր ճանաչւում մասնաւոր սեփականութիւն՝ վայելքի առարկաների մէջ. բոլոր արտադրուած բարիքները սպառւում էին համայնօրէն, հաւասարապէս, թէ վանքերում և թէ ուրիշ, կողմնակի համախմբումների մէջ։ Եղել են միջին դարերում ևս բազմաթիւ կոմմունիստական աղանդներ, որոնց մասին կը խօսենք յետագայում։ Հարկաւ, այդ բոլոր սիստեմները միակողմանի են, նահապետական և կղզիացած փոքրաթիւ ու սակաւանդամ համայնքների մէջ. բայց նոյնիսկ այդ մասնակի, միակողմանի կոմմունիզմը նշանակելի է, որպէս ապացոյց՝ թէ համայնատիրական կարգերը բնաւ ցնորք չեն, ոչ էլ հակառակ մարդկային բնութեանը, ինչպէս պնդում են կոմմունիզմի շահախնդիր հակառակորդները։

Ասացինք, որ ամենահին, նախապատմական դարերում արդէն սեփականութիւնը եղել է համայնական. առաջին հասարակութիւնները ապրել են մի տեսակ կոմմունիզմի ռէժիմի տակ — դեռ շատ, ի հարկէ, դեռհիկ, անկատար — բայց մի ռէժիմ՝ որ առհասարակ չի ճանաչել մասնաւոր գոյք ***), չի ճանաչել հարստի ու

դիւղացիութիւն, մանր ու խոշոր արհեստաւորութիւն, մանր ու խոշոր վաճառականութիւն, կապիտալիստ կամ դրամատէրաբդիւնաբերողների դասակարգ (վերջինս, որ անւանում են ուրիշ խօսքով բուրժուազիա, համեմատաբար նոր ժամանակների ծնունդ է, նա հանդէս է գալիս 16-րդ դարում, դլխաւորապէս Անգլիայի մէջ, գործարանական կեանքի սկզբնաւորութեան հետ), ապա կղերև ազնուականութիւն։ Առանձին դասակարգ կարելի է համարել և պաշտօնէութիւնը, բիւրօկրատիան։ Վերջապէս կայ մի դաս, որ իր էութեամբ դուրս է բոլոր դասակարգերից՝ որ ձուլւում է գրեթէ բոլորից, դա մտաւորականութիւնն է, ինտելիգենցիան։ Ռուսաստանում և ուրիշ տեղերում՝ նրա ամենափայլուն ներկայացուցիչներից շատերը առաջ են եկել ազնուականութիւնից ու կղերից, բայց լինելով էապէս գաղափարական տարր, անցել են ժողովրդի կողմը և ուղղել են իրենց սլաքները նոյն ազնուականութեան ու կղերի դէմ։

*) „Դրօշակ“, օգոստոս 1909 թ. „Ազգային ընկերակցութիւնների ծագումը“։

**) Երկու բառերը մենք պիտի գործածենք, իբրև հոմանիշ։ Երկուսն էլ բնորոշում են այն գալոց հասարակական կարգուսարքը, ուր աշխատանքի ու արդիւնագործութեան բոլոր միջոցները — հող, դրամագլուխ, հանքեր, գործարաններ, մեքենաներ, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցներ և այլն — պիտի առնին իւրաքանչիւր երկրում՝ հարստահարիչ փոքրամասնութեան ձեռքից և պիտի դրւին, իբրև ընդհանուր, համայնական սեփականութիւն, ամբողջ աշխատաւոր ընդհանրութեան ձեռքը։

***) Ասում ենք՝ առհասարակ՝ որովհետև եղել են

աղքատի տարբերութիւններ, դասակարգային հակադրութիւն ու կռիւ։

Համայնական, կօմմունիստական այդ „իրաւակարգը“, համատարած էր այն անյիշատակ ժամանակներում։ Բայց նա իսպառ չի էքացել, պահպանում է իր խոշոր մնացորդները և մեր օրերում։ Համայնական հողատիրութեան ռէժիմի տակ այսօր ապրում են հարիւր միլիոնաւոր ազգաբնակութիւններ արևելեան Եւրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում։ Նա գոյութիւն ունի և Ռուսաստանում և մեզ մօտ։ Նա տարածուել է ժամանակին նաև ամբողջ արևմտեան Եւրոպայում՝ Շօտլանդիայից մինչև Իտալիա և Լեհաստան։ Նա տիրել է և նախնական գերմանների, սլավօնների ու կելտերի մօտ, երբ նրանք եկել էին յօշոտելու Հռօմը։

Իւրաքանչիւր հողակտոր, իր մշակելի և անմշակ տարածութեամբ, իր անտառներով ու արօտատեղերով— ամբողջ աշխատաւոր համայնքի սեփականութիւն։ Ծանօթ իրողութիւններ մեզ համար...

Գիւղական համայնքը (commune villageoise) կազմւում էր կամ արիւնակից տոհմից — ընդհանուր պապերից սերուած ու ճիւղաւորուած—կամ թէ մի քանի այլածագում տոհմերից — միացած, դաշնակցած մէկ ընդհանուր հողաբաժնի ու աշխատանքի շուրջը։

Ինչպէս կը տեսնենք, ժամանակի ընթացքում համայնական այդ կարգերը — շնորհիւ արդիւնաբերութեան գործիքների յարատևուն մշակման ու կատարելագործման և անհատական ձեռներէցութեան զարգացման—կամաց-կամաց քայքայւեցին, և մասնաւոր սեփականութեան երևոյթները, որոնք հնում հազւադէպ էին, ցանուցրիւ, հետզհետէ բազմացան. համայնքների ծոցում առանձին գերդաստանների մէջ, սկսեցին ամբարել որոշ չափով գոյքեր, հարստութիւններ, որոնք ժառանգւում էին իւրաքանչիւր գերդաստանի մէջ սերնդէ սերունդ։

Այս. սակայն, դա միայն շարժական գոյք էր, շարժական հարստութիւններ—նախիր, գործիքներ, զէնքեր, բնակարաններ, և առհասարակ, „այն բոլորը, ինչ որ կարող էր ոչնչացուիլ կամ այրուիլ“...

Դրանք էին դառնում մասնաւոր սեփականութիւն և ժառանգւում։ Մինչդեռ անշարժ գոյքը, հողը, բացարձակապէս մերժում էր մասնաւոր սեփականութեան սկզբունքը։ Հողը Աստծուն էր... Այդպէս է դատում ժողովուրդը այսօր ևս, շատ տեղերում։ Մօտաւորապէս նոյն եղանակով դատել են մարդիկ և այն հին, նախապատմական դարերում։ Հողը, ինչպէս և օդը, ջուրը, չեն կարող դառնալ մասնաւոր սեփականութիւն։ Նրանք Աստծուն են, Բնութեանն են։ Ո՞րպիսի անդունդ այդ գռեհիկ ժողովուրդների և ժամանակակից լէնդ-լօրդների ու պօմէշչիկների բարոյական հասկացողութիւնների մէջ, — լ է ն դ-լ օ ր դ ն ե ր ի ու այլ հողային իշխողների՝ որոնք յենւած պապական իրաւունքների, բռնի ուժի յաղթանակի վրայ, „իմի“ ու „քոնի“ շարագործ հասկացողութեամբ՝ զաւթել են հսկայական տարածութիւններ, երկրագնդի լաւագոյն, արգաւանդ հողերը և պերճանքի ու շլայտութեան խրախճաններով թնդացնում են աշխարհը, մինչդեռ բուն հողագործ, աշխատաւոր, բազմամիլիոն զանգւածները տառապում են անհողութեան չարիքից, հեծում են սովի ու ամեն տեսակ զրկանքների մէջ...

Հողը Աստծուն էր. նա պատկանում էր ամբողջ ցեղին, տոհմին, կամ գերդաստանին, ամբողջ գիւղին կամ բազմաթիւ գիւղերի դաշնակցութեան։ Այնտեղ պարբերաբար կատարւում էր հ ո ղ ա բ ա ժ ա ն ո ւ մ ը, համարեա նոյն եղանակով, ինչպէս մեր օրերում։

Բայց այդ նախնական ժամանակներում, համայնական կամ հաւաքական (կօլլէքտիվ) բնոյթ է ունեցել ոչ միայն հողը, այլ և աշխատանքը, արդիւնագործութիւնը։ Այդ սովորութիւնը ևս եղել է գրեթէ համաշխարհային։ Նրա մնացորդները ևս տեսնում ենք այսօր երկրագնդի բոլոր ծայրերում, նաև Ռուսաստանում ու Կովկասում։ Գրեթէ բոլոր արիական, սեմիտական, մօնգօլական ցեղերի մէջ, ինչպէս նաև Ամերիկայի կարմրամորթների, նեգրների ու այլ բարբարոս ժողովուրդների մէջ, եղել է հնում և այսօր էլ որոշ չափով շարունակւում է ընդհանուր հողամշակութեան սովորութիւնը, աշխատանքը կազմակերպւած համայնովին, միացած գործիքներով ու ճիգերով։

Համայնովին մշակել են հողերը, համայնովին կտրատել, մաքրել անտառները, ցամքեցրել ճահիճները, համայնօրէն հնձել են արտերն ու մարգագետինները, փորել են ջրմուղներ, բաց արել հաղորդակցութեան ճամբաներ, շակել են աւերումները... Հսկայական աշխատանք են թափել „բարբարոս“ համայնքները՝ նոյնիսկ հինաւուրց Եւրոպայում, հազարաւոր տարիներ առաջ՝ հարթելու համար անթիւ ուղիներ, խիտ, կուսական անտառների, լեռների, ճահիճների միջից։ Այդ ահագին խոչընդոտները յաղթահարել են՝ շնորհիւ ընդհանուր, հրաշագործ ճիգերի։ Դեռ այսօր ևս ռուս գիւղացիները, գաղթելով խմբովին դէպի Սիբիր և հաստատւելով Ամուր գետի աւազանում, մշակում են հողը համայնովին և նոյնպէս ընդհանուր ուժերով շինում են իրենց կացարանները։

Վ ա յ ե լ ո ւ մ ը միայն, բարիքների սպառումը միայն՝ չի եղել հնում լայն ծաւալով համայնական։ Գոնէ ոչ միշտ Նա կատարւել է մեծ գերդաստանների օճախներում, զատ-զատ յարկերի տակ, մտերմական, արիւնակցական շրջաններում։ Եւ դա բնական, հասկանալի է։ Ժամանակակից սոցիալիզմը ևս նոյն ձևով է պատկերացնում գալոց համայնական աւելի բարձր կարգերի մէջ՝ նիւթական բարիքների սպառումը։

Բայց այնուամենայնիւ, համայնականութեան գեղեցիկ աւանդութիւնը վաղեմի մարդկութեան մէջ շարունակւել է յայտնի չափով նոյնիսկ սպառումի աշխարհում։ Պարբերաբար, գիւղական համայնքների մէջ կազմակերպւել են ընդհանուր հացկերոյթներ ու խրախճաններ, և

բացառութիւններ։ Մասնաւոր սեփականութեան գաղափարն, անշուշտ, տեղ-տեղ և մերթ ընդ մերթ ցոլացել է անհատների գլխում և երբեմն որոշ առարկաներ—դիցուք մի զէնք կամ մի զարդ, պաճուճանք կամ թէկուզ մի կին—պատկանել են այս կամ այն անհատին. բայց դա եղել է սակաւադէպ մի երևոյթ։ Մարդիկ ընդհանրապէս, մանաւանդ առաջին մարդիկ, արտադրել են համայնօրէն (որս, ձկնորսութիւն և այլն) և սպառել են նոյնպէս համայնօրէն։ Ամեն բան և ամենից առաջ հողը կազմել է ամենուրեք ընդհանուր սեփականութիւն։

դրա համար օգտուել են այլևայլ առիթներից — մեռած նախնիքների յիշատակութիւն ու տօներ, կրօնական հանդէսներ, դաշտային աշխատանքների սկզբնաւորում, ծնունդներ, ամուսնութեան ու թաղման հանդէսներ ևն։

Ահա օրինակ, սիբիրեան բուրիաթները — մի ուշագրաւ նմուշ հին հայայնական բարքերի։ Ռուսական բռնակալութիւնը, բարեբախտաբար, չի ջնջել որոշ ծայրագաւառներում — Սիբիրում, Կովկասեան լեռնաշխարհում, Թուրքեստանում — այդ իդեալիկ (հովուերգական) հնութեան թանկագին մնացորդները։ Մօնղոլածագում բուրիաթները ապրում են նահապետական ահագին ընտանիքներով, որ կոչւում են „անբաժանելի“ (*familles indivises*)։ Անգամ երբ ընտանիքի արու անդամները ամուսնանում են, նրանք չեն անջատւում, այլ հաստատւում են նոյն ցանկապատում, շինում են նոր կացարան և շարունակում ապրել նոյն օճախի շուրջը։ Կողք կողքի, ուրեմն, մի շարք սերունդներ...

Աւելին կայ։ Որոշ հողի վրայ հաստատւած բուրիաթների բազմաթիւ նահապետական ընտանիքներ կազմում են մէկ ուլուս *). բազմաթիւ ուլուսներ միանալով, կազմում են ցեղ։ Ցեղերն էլ միանալով ստեղծում են դաշնակցութիւն։

Բուրիաթական դաշնակցութեան մէջ հողը, ի հարկէ, ամենքի հաւասար սեփականութիւնն է։ Հողաբաժանումները զանազան ուլուսների միջև կատարւում են պարբերաբար, ժողովրդային համագումարի ձեռքով, իսկ ցեղերի միջև — ամբողջ դաշնակցական համագումարի տնօրինութեամբ։

Ահա այդ բէժիմի տակ են ապրում արևելեան Սիբիրի մօտ 250,000 բուրիաթներ, չը նայեած, որ ամբողջ երեք դար ապրում են ռուսաց տիրապետութեան տակ։ Ռուս ճանապարհորդ հետախոյզների վկայութեամբ՝ կազմալուծման սաղմը մտել է արդէն այդ համայնքների մէջ և պարզ, նահապետական կացութիւնը արագ-արագ յեղաշրջւում է, զարգանալով դէպի անխուսափելի ինդիվիդուալիզմը, դէպի մասնաւոր սեփականութեան ժամանակակից ռէժիմը։

Այդպէս, ուրեմն, ամբողջ հին աշխարհը մի ժամանակ — ե՞րբ, յայտնի չէ — ծածկւած է եղել փոքրիկ, անկախ համայնքներից — գենական դրութեան կամ նահապետական ճիւղաւորւած ընտանիքների ձևով — համայնքներ, որոնցից իւրաքանչիւրը կազմել է մի գոց, ուրոյն աշխարհիկ **), ունեցել է իր հողային տարածութիւնը, մշակել է այն՝ ընդհանուր, հաւաքական ուժերով, կառավարել է իր յատուկ օրէնքներով ու հաստատութիւններով։ Այդ կացութիւնը անխանգար յարատևել է երկար դարեր, մասնաւորապէս այն վայրերում, ուր համայնքները ազատ են եղել պատերազմի ու աւարառումների պատուհասից ***)։

*) Նշանակում է համայնք։ Կովկասեան լեռնցիների մէջ ա ո ւ լ բառը մօտաւորապէս նոյն իմաստն ունի։

**) Ռուսական համայնքը դեռ այսօր էլ այդպէս է կոչւում — „միր“, „աշխարհ“։

***) Պատերազմը Այն հեռաւոր ժամանակներում եղել է ամենահզօր գործօններից մինը, որ կամաց-կամաց խախտել է վաղեմի համայնատիրական կարգերը, խախտել է դրա հետ և հին „իդիլլիկ“ հաւասարութիւնը, ջնջել է աստիճանաբար նահապետական մի շարք առաքինութիւններ, հաստատել է համայնքների վրայ ժամանակաւոր շէֆերի, հրամանատարների ու նրանց բազմաթիւ օգնականների տիրապետութիւնն ու բռնութիւնը, կենտրոնացրել է հողի ընդարձակ տարածութիւններ և դերի մարդկանց լէգէոններ՝ յաղթողների, առաջնորդների ձեռքում, զարկ է տուել այդպիսով — եթէ ոչ ծնունդ — մասնաւոր սեփականութեան ռէժիմին ու դասակարգային շերտաւորման։ Պատերազմի դերը հսկայական է մարդկային հասարակութեան զարգացման պրոցէսում։

*) Երկու բառերը հասարակական գիտութեան մէջ իրենց յատուկ իմաստն ունին. նրանք որակում են երկու յաջորդական շրջաններ։ Վ ա յ ր ե ն ո ւ թ ի ւ ն ը՝ մարդկային հասարակութիւնների ամենանախնական շրջանն է։ Բ ա ր բ ա ր ո ս ո ւ թ ի ւ ն ը յաջորդում է նրան, որպէս ե ր կ ր ո ր դ, աւելի բարձր աստիճան մարդկութեան զարգացման մէջ։ Ե ր ր ո ր դ շրջանը — ք ա ղ ա ք ա կ ր թ ո ւ թ ի ւ ն ն է, որ բնորոշւում է նախ և առաջ գ ր ե ր ի գ ի ւ տ ո վ, ապա և մտքի ու աշխատանքի մի շարք ուրիշ նւաճումներով — մետաղների ձուլումով, հացահատիկների մշակութեամբ, կենդանիների ընտանեցումով և այլն։

Այդ փոքրիկ, համատարած մարդկային հասարակութիւնները իրենց մշտական բնակավայր-հողաբաժիններով եղել են չ ու կ է տ, խարիսխ՝ ապագայ ազգութիւնների կազմաւորման և զարգացման համար։ Կարելի է ասել, չը կայ մի ազգ, որ երբևիցէ, իր մանկութեան հասակում, իր վայրենութեան կամ բարբարոսութեան շրջանում *) ապրած չը լինի այդ գենային կամ նահապետական „կոմմունիստական“ համայնքի շրջանը։

Որտե՞ղ չը կայ — նոյնիսկ այժմեան կապիտալիստական դարաշրջանում — այդ նահապետական գերդաստանի տիպը. 4, 5, և աւելի սերունդներ՝ միևնոյն յարկի տակ, միևնոյն տնտեսութեան ու աշխատանքի շուրջը։ Արևմտեան Եւրոպայում միայն նա չ ը ա ց ել է. արևելեանում՝ դեռ մնում է, թէև ցիրուցան, կղզիացած ձևով։ Իսկ Ասիան լի է այդպիսի բազմանդամ նահապետական ընտանիքներով։ Չինաստանում ու Հնդկաստանում նրանք սովորական երևոյթ են։ Նրանց հետաքրքրական նմուշները տեսնում ենք և հարաւային սլավոնների մէջ — սերբերի, բուլգարների. նրանք կոչւում են այդտեղ՝ Զ ա դ ր ո ւ գ ա. (բառը նշանակում է „բարեկամի“ համար և թարգմանում է մտերմական, եղբայրական համայնքի ներքին էութիւնը։ Բուրիաթների մօտ՝ պարզապէս անւանում են՝ „եղբայրութիւն“)։

Վերջապէս, մեզ մօտ, Անդրկովկասում ու Թիւրքաց Հայաստանում ևս՝ տեղ-տեղ հանդիպում ենք այդ նախնական տիպի բազմասերունդ գերդաստաններին։ Դրանք բոլորը նոյն հին նահապետական ու համայնական կացութեան ուշագրաւ մնացորդներն են, որ հեռզհետէ տրորւում ու չ է ք ա ն ո ւ մ են անհատապաշտ քաղաքակրթութեան տարրալուծող ալիքների մէջ...

տարբերութիւնը, կենտրոնացրել է հողի ընդարձակ տարածութիւններ և դերի մարդկանց լէգէոններ՝ յաղթողների, առաջնորդների ձեռքում, զարկ է տուել այդպիսով — եթէ ոչ ծնունդ — մասնաւոր սեփականութեան ռէժիմին ու դասակարգային շերտաւորման։ Պատերազմի դերը հսկայական է մարդկային հասարակութեան զարգացման պրոցէսում։

*) Երկու բառերը հասարակական գիտութեան մէջ իրենց յատուկ իմաստն ունին. նրանք որակում են երկու յաջորդական շրջաններ։ Վ ա յ ր ե ն ո ւ թ ի ւ ն ը՝ մարդկային հասարակութիւնների ամենանախնական շրջանն է։ Բ ա ր բ ա ր ո ս ո ւ թ ի ւ ն ը յաջորդում է նրան, որպէս ե ր կ ր ո ր դ, աւելի բարձր աստիճան մարդկութեան զարգացման մէջ։ Ե ր ր ո ր դ շրջանը — ք ա ղ ա ք ա կ ր թ ո ւ թ ի ւ ն ն է, որ բնորոշւում է նախ և առաջ գ ր ե ր ի գ ի ւ տ ո վ, ապա և մտքի ու աշխատանքի մի շարք ուրիշ նւաճումներով — մետաղների ձուլումով, հացահատիկների մշակութեամբ, կենդանիների ընտանեցումով և այլն։

Ա Զ Դ

Վերջին պահուն որոշած լինելով «Վերածնող Հայրենիքը եւ մեր դերը» գրքոյկի երկրորդ մասը միացնել առաջինին՝ հրատարակութիւնը յետաձգեցինք։ Լոյս տեսնելուն պէս կը յայտարարւի։